

ԼՆԵՐԳԵՏԻԿԱ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՔԱՀԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արա Մարջանյան

Ներկայացվող հոդվածում քննարկվում են գլոբալ և տարածաշրջանային էներգետիկ ոլորտների զարգացման դինամիկան, առանձնահատկությունները և միտումները: Հոդվածում օգտագործվող մեթոդաբանությունը թույլ է տալիս համարժեքորեն կատարել տարբեր տարածաշրջանների և երկրների էներգատնտեսական համեմատական վերլուծությունը: Ներկայացվում և մեկնաբանվում են երկրների էներգատնտեսական “դինամիկ դինամկարները”:

Հատուկ ուշադրություն է դարձվում էներգակիրների միջտարածաշրջանային հոսքերի փոփոխման միտումների և էներգետիկ ներկրումային կախվածության ցուցանիշների վրա: Փորձ է արվում վեր հանել XX դարի 2-րդ կեսից մինչ օրս աշխարհաքաղաքականության հետ միախուսված էներգետիկ գործոնի դերն ու նշանակությունը:

Ներածություն

Էներգետիկ ոլորտն ի վերուստ եղել է քաղաքակրթությունների տնտեսական գործունեության հիմքը: Տարալուծվելով մարդու առօրյա կյանքում՝ այն անմիջականորեն ձևավորել է հասարակության դեմքը և հանդիսացել քաղաքակրթական բնութագրիչ: Այս բնագավառում տեխնոլոգիական առաջընթացը, օգտագործվող էներգակիրների փոփոխությունը (բնական քարշող ուժ, ջուր, քամի, քարածուխ, նավթ, էլեկտրականություն, միջուկային էներգիա), թերևս ողջ մարդկության առաջընթացի հոմանիշն է, սակայն և՛ մտահոգությունների առարկան:

Էներգետիկ ոլորտի խնդիրներն ու հրամայականները դեռ վաղ անցյալից էապես պայմանավորել են միջազգային հարաբերությունները: Հետևաբար զարմանալի չէ, որ էներգետիկ գործոնը նոր ժամանակների աշխարհաքաղաքականությունում ձևագոյացնող և անքակտելի բաղադրիչն է:

Սույն հոդվածում փորձ է արվում վեր հանել XX դարի 2-րդ կեսից մինչ օրս երկրների ու տարածաշրջանների աշխարհաքաղաքականության հետ միախուսված էներգետիկ գործոնի դերն ու նշանակությունը: Բնական է այս փորձը սկսել էներգատնտեսական զարգացման գլոբալ ու տարածաշրջանային արդի միտումների քննությունից:


1. Էներգատնտեսական զարգացման գլոբալ ու տարածաշրջանային միտումները

Ստորև դիտարկվող երկրների տարածաշրջանային բաժանումը հիմնականում համապատասխանում է Եվրասիայի և Ենեոգետիկայի և տրանսպորտի դիրեկտորատի կողմից հրատարակվող տարեկան ժողովածուներում 2000թ.-ից ընդունված բաժանմանը¹ [1]: Տարբեր երկրների (տարածաշրջանների) հիմնական էներգատնտեսական ցուցանիշներին, օրինակ՝ համախառն ներքին արտադրանք (ՀՆԱ), էներգիայի համախառն ներքին սպառում (ԷՀՆՍ) արտահայտված նավթային համարժեքով (տոննա նավթային համարժեք՝ տ.ն.հ.) և այլն, բնորոշ են արժեքների մեծ ցրումը և տարբերությունը: Հետևաբար, համեմատական վերլուծությունը նպատակահարմար է իրականացնել հարաբերական մեծությունների օգնությամբ՝ օրինակ, տեսակարար ՀՆԱ (տարադրամ/բնակիչ), տեսակարար ԷՀՆՍ (տ.ն.հ./բնակիչ): Այս մեծությունների համեմատությունը թեև թույլ է տալիս համադրել էներգատնտեսական քանակական ցուցանիշները, սակայն տեսադաշտից դուրս է թողնում այնպիսի կարևոր որակական ցուցանիշ, ինչպիսին էներգաարդյունավետությունն է: Ուստի, համարժեք վերլուծության

¹ **ԵՄ** (Եվրամիություն, EU) ներառում է Ավստրիան, Բելգիան, Գերմանիան, Դանիան, Իռլանդիան, Իսպանիան, Իտալիան, Լյուքսեմբուրգը, Հոլանդիան, Հունաստանը, Սեֆ Բրիտանիան (ՄԲ), Շվեդիան, Պորտուգալիան, Ֆինլանդիան և Ֆրանսիան: **ԿԱԵԿ** (Կենտրոնական և Արևելյան Եվրոպա, CEEU) ներառում է Ալբանիան, Բուլղարիան, Չեխիան, Լեհաստանը, նախկին Հարավսլավիան, Հունգարիան, Ռումինիան և Սլովակիան: **ԵԱԱՄ** (Եվրոպայի ազատ առևտրի միություն, EFTA) ներառում է Իսլանդիան, Նորվեգիան և Շվեյցարիան: **ՀԱԱՄՊ** (Հյուսիս ամերիկյան ազատ առևտրի պայմանագիր, NAFTA) ներառում է ԱՄՆ-ը, Կանադան և Մեքսիկան: **ՏՀԶԿ** երկրները (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, OECD, ստեղծված է 1961թ., կենտրոնակայանը՝ Փարիզ) ներառում է ԵՄ, ԵԱԱՄ, ՀԱԱՄՊ տարածաշրջանների երկրները, ինչպես նաև Ավստրալիան, Նոր Զելանդիան և Ճապոնիան: Վերջին 3 երկրները համախմբվում են Խաղաղ Օվկիանոսյան ՏՀԶԿ տարածաշրջանի ներքո (**ԽՕ ՏՀԶԿ**, OECD Pacific): **ԱՊՀ** (Անկախ պետությունների համագործակցություն, CIS) ներառում է Ադրբեյջանը, Բելառուսը, Թուրքմենիան, Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Ռուսաստանը, Վրաստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը և Ուկրաինան: **ՄԱ** (Միջին Արևելք, ME) ներառում է Բահրեյնը, Իսրայելը, Իրանը, Իրաքը, Լիբանանը, Կատարը, Հորդանանը, Միացյալ Արաբական Եմիրությունները (Մ.Ա.Է.), Եմենը, Սաուդյան Արաբիան, Սիրիան, Քուվեյթը և Օմանը: **Ասիան** ներառում է Չինաստանը, Հոնկոնգը, Սինգապուրը, Հարավային Կորեան, Տայվանը, Հնդկաստանը, Պակիստանը և այլ ասիական երկրներ: Աշխարհի գլոբալ ցուցանիշները, լիարժեք նշված տարածաշրջաններից, ներառում են նաև Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի ցուցանիշները: Բացառություն է կազմում Հյուսիսային Կորեան: «Զարգացած երկրներ» հասկացությունն օգտագործվում է ՏՀԶԿ երկրներին համարժեք, «Զարգացող երկրներ» հասկացությունը համարժեք է ոչ-ՏՀԶԿ երկրներին: Նավթ Արտահանող երկրների Կազմակերպություն (**ՆԱԵԿ**, OPEC, ստեղծված է 1960թ., կենտրոնակայանը՝ Վիեննա), ներկայումս ներառում է Ալժիրը, Գաբոնը, Էկվադորը, Ինդոնեզիան, Իրանը, Իրաքը, Լիբիան, Կատարը, Մ.Ա.Է.-ն, Նիգերիան, Ս. Արաբիան, Կենեսուելան և Քուվեյթը:

համար անհրաժեշտ է հաշվի առնել ևս մեկ հիմնական ցուցանիշ՝ *ՀՆԱ-ի էներգատարությունը*: Դա էՀՆԱ և ՀՆԱ-ի հարաբերությունն է և բնութագրում է միավոր ՀՆԱ-ի գոյացման համար սպառված էներգիայի քանակը: Ուստի, նա կարող է ընկալվել որպես տվյալ երկրի կամ տարածաշրջանի գործունեության էներգատարունակության ցուցանիշ: Հետևելով մի շարք ուսումնասիրություններում բերված առաջարկություններին [2-6], ստորև համեմատական վերլուծությունը կատարվում է տեսակարար ՀՆԱ և ՀՆԱ-ի էներգատարություն առանցքներում:

Որոշակի տարվա համար արձանագրված ցուցանիշներով՝ տվյալ երկիրը կամ տարածաշրջանն այսպիսի գրաֆիկում կզբաղեցնի իր ուրույն տեղը: Այսպես, ըստ 2000թ. արձանագրված ցուցանիշների [2], նկ. 1.ա-ում նշված առանցքներում պատկերված են աշխարհի 135 երկրների դիրքերը (կետեր): Ինչպես հետևում է այս նկարից, երկրները խմբավորված են հատկանշական հիպերբոլի շուրջ, որի վերին թևում գտնվում են տեսակարար ՀՆԱ-ի բարձր ցուցանիշներով և ՀՆԱ-ի ցածր էներգատարությամբ, բարեկեցիկ և արդյունավետ երկրները²: Պատկերավորության համար բերված են նաև ՏՀԶԿ և ԱՊՀ տարածաշրջանների, ինչպես նաև ողջ աշխարհի դիրքերը՝ ըստ ագրեգատ ցուցանիշների: Նկարը հստակորեն ցուցադրում է ՏՀԶԿ և ԱՊՀ տարածաշրջանների հակադիր բեռներում (հիպերբոլի վերին և ստորին թևերում) գտնվելու փաստը: Նկար 1.բ-ում պատկերված են Լատինական Ամերիկայի, Միջին Արևելքի, Չինաստանի և Ասիայի (Չինաստանից զատ) տարածաշրջանները, որոնք գտնվում են հիպերբոլի կենտրոնական




² Նկար 1.ա-ում ներկայացրել ենք նաև այս հիպերբոլի ապրոքսիմացիոն հավասարումը, միջին քառակուսային սխալանքի (R²) արժեքի հետ միասին:

հատվածում՝ ողջ աշխարհի դիրքից ներքև և աջ: Այս հանգամանքը աշխարհի միջին ագրեգատ ցուցանիշների վրա ՏՀԶԿ երկրների ցուցանիշների գերակա ազդեցության հետևանքն է:

Այսպիսով, ըստ [2]-ի, 3-րդ հազարամյակի շեմին ՀՆԱ էներգատարությամբ ԱՊՀ-ն և Չինաստանը գերազանցում էին ՏՀԶԿ-ին 9 և 5 անգամ, միևնույն ժամանակ տեսակարար ՀՆԱ-ի ցուցանիշով զիջելով համապատասխանաբար մոտ 14 և 26 անգամ: Ընդհանուր առմամբ, այսպիսի պատկերը կենտրոնական կոշտ պլանավորմամբ, ոչ շուկայական տնտեսակարգով այս տարածաշրջանների անցյալի հետևանքն է:

Տվյալ տարում արձանագրված ցուցանիշներով կառուցված այս նկարը, համարժեքորեն նկարագրելով երկրների (տարածաշրջանների) փոխադարձ դիրքը, չի բացահայտում սակայն այս ստատիկ պատկերի ետևում գործող միտումները, չի նկարագրում էներգատնտեսական ցուցանիշների փոփոխության դինամիկան: Իրոք, երկարատև ժամանակահատվածում ենթարկվելով տվյալ երկրում գործող միտումների ազդեցությանը, փոփոխվում են նաև այդ երկրի էներգատնտեսական ցուցանիշները: Այսպիսի փոփոխությունը նշված առանցքներում գոյացնում է բնութագրական մի հետագիծ, որը տվյալ երկրի հատկանշական էներգատնտեսական դինամիկ «դիմանկարն» է:

Չենվելով [1]-ի տվյալների համակարգչային գրադարանի համապատասխան մշակման վրա, նկ. 2-ում պատկերել ենք մի շարք տարածաշրջանների և երկրների այս հետագծերը: Համապատասխան գունավորումով սլաքները ցույց են տալիս հետագծի ուղղվածությունը՝ սկսած 1980թ.-ից մինչև 1998թ.-ի ցուցանիշներին համապատասխանող դիրքը: Ինչպես հետևում է նկ. 2-ից, նշված ժամանակահատվածում ողջ աշխարհի ագրեգատ ցուցանիշի դիրքը դանդաղորեն, բայց նկատելի կերպով տեղաշարժվել է վեր և ձախ՝ դեպի ավելի էներգաարդյունավետ և բարեկեցիկ երկրների տիրույթ: Եվ իսկապես [1, 2], վերջին երկու տասնամյակը գլոբալ առումով տնտեսական ոչ սրընթաց, բայց հաստատուն զարգացման տարիներ էին: Սկսած 1980թ.-ից, մոլորակի բնակչության միջին տարեկան աճը կազմել է 1.6 %, մինչդեռ համաշխարհային ՀՆԱ-ն (ՀՀՆԱ) աճել է տարեկան միջին հաշվով 2.5%-ով: Արձանագրված է ՀՀՆԱ գոյացման էներգատարության ոչ մեծ, սակայն հաստատուն նվազում՝ տարեկան միջին հաշվով 1.0%: Տնտեսական զարգացումը գլոբալ մակարդակով ավելի կայուն էր 80-ականների 2-րդ կեսին, որին հետևեց որոշակի դանդաղում (1990-93թթ.)՝ հիմնականում ՏՀԶԿ երկրների հաշվին: Սկսած 1994թ.-ից, ՀՀՆԱ աճն արագանում է՝ հասնելով տարեկան միջին հաշվով 3.0%-ի՝ այս անգամ արդեն հիմնականում զարգացող (ոչ ՏՀԶԿ) երկրների



հաշվին:

1980-98թթ. աշխարհում էներգիայի սպառումը աճել է տարեկան միջին հաշվով 1.5%-ով: Սպառման աճը դանդաղել է վերջին տասնամյակում՝ 1990-98թթ. կազմելով տարեկան միջին հաշվով 1.3%: 1998թ.-ին, առաջին անգամ սկսած 1982թ.-ից, էներգիայի սպառման գլոբալ ագրեգատ ցուցանիշներում արձանագրվել է կրճատում: Դա պայմանավորված էր 1997թ. ամռանը ծայր առած ասիական ֆինանսատնտեսական ճգնաժամով, որը խորանալով ընդլայնվեց դեպի ԱՊՀ և ԼԱ (1998թ. ձմեռ): Ընդ որում, եթե 80-ականների ընթացքում զարգացող երկրներում էներգիայի սպառման միջին տարեկան աճը (2.7%) զգալիորեն գերազանցում էր ՏՀԶԿ երկրների համապատասխան ցուցանիշը (0.9%), ապա 90-ականների ընթացքում այն արդեն կազմում էր տարեկան ընդամենը 1.0% և զիջում էր զարգացած երկրների ցուցանիշին (1.5%): Այդ ժամանակահատվածում Ասիայում գրանցվել է սպառման 2.4%, ԼԱ-ում՝ 3.5% և ՄԱ-ում՝ 5.5% աճ, իսկ ԿԱԵՎ և ԱՊՀ երկրներում արձանագրվել է սպառման միջին տարեկան կրճատում՝ համապատասխանաբար -2.3% և -5.1%: Հասկանալի է, որ այս կրճատումը ԽՍՀՄ փլուզման և էներգակիրների «սովետական» մատակարարումների դադարեցման հետևանք է: Եվ նորից, 1980թ. համեմատ էականորեն աճել է էներգիայի սպառման Ասիայի մասնաբաժինը՝ 1997թ. այն կազմել է ողջ աշխարհի 23.8%, 1980թ. 15.7% ցուցանիշի դիմաց: Մինչդեռ ԱՊՀ և ԿԱԵՎ մասնաբաժինները նվազել են 15.5%-ից


մինչև 9.2% և 4.9%-ից մինչև 2.9% համապատասխանաբար: 1998թ. ՏՀԶԿ երկրների էներգիայի սպառման մասնաբաժինը կազմել էր 52.7%, 1980թ. 49.8% ցուցանիշի դիմաց: Հատկանշական է, որ ԽՍՀՄ փլուզման հետևանքով առաջացած գլոբալ ցուցանիշների աճի որոշակի դանդաղումն ավելի մեղմ էր, քան ասիական տնտեսական ճգնաժամի հետևանքները:

Այսպիսով, գլոբալ էներգատնտեսական զարգացման առաջատարը և «քարշող ուժը» 1980-90թթ. հանդիսացավ Ասիական տարածաշրջանը (տես նկ. 2), որտեղ քննարկվող ժամանակահատվածի առաջին տասնամյակում արձանագրվեց ՀՆԱ-ի 7.0%, իսկ 2-րդում՝ 6.8% միջին տարեկան աճ: Արդյունքում, անցած երկու տասնամյակներում Ասիան կրկնապատկեց ՀՆԱ-ում իր մասնաբաժինը, չնայած բացարձակ ծավալներով այն դեռ մեծ չէր՝ 10.6% (1998թ.): Նշենք, որ նույն թվականին, ՀՆԱ-ի 3/4-ից ավելին բաժին էր ընկնում ՏՀԶԿ երկրներին, մինչդեռ այս տարածաշրջանի գումարային բնակչությունը կազմում է մոլորակի բնակչության միայն 1/6-ը: 1980թ.-ից սկսած անընդհատ բարելավվում է նաև Ասիական տարածաշրջանի ՀՆԱ-ի էներգատարության ցուցանիշը՝ կրճատվելով մոտ 40%-ով: Հատկապես նշանակալից էր այդ բարելավումը Չինաստանի համար (67%), որի ՀՆԱ-ի էներգատարության ցուցանիշը նվազել է 4645-ից (1980թ.) մինչև 1531 տ.ն.հ./մլն. 1990թ. Եվրո, իսկ վերջին 15 տարում ՀՆԱ-ի էներգատարությունը նվազել է տարեկան միջին հաշվով 6.0% արագությամբ³:

Հակառակ պատկերը կարելի է տեսնել ՄԱ և ԱՊՀ հետազօծերի համար (տես նկ. 2): Այս տարածաշրջանների և նրանց որոշ երկրների (Իրան, Ռուսաստանի Դաշնություն) դիմամիկ հետազօծերն առավել մանրամասնություններով առանձին պատկերված են նկ. 3-ում: Այստեղ անհրաժեշտ է կատարել հետևյալ պարզաբանումները:

ՄԱ տարածաշրջանի երկրների ՀՆԱ-ները մեծապես ներազդվում են նավթահանումներից զոյացած եկամուտներով: Այս ազդեցությունը հատկապես զգալի էր 80-ականներին՝ նավթի կոնյունկտուրայի տատանումների պարագայում: 90-ականների ընթացքում, նավթային ոլորտից ընդհանուր առմամբ զատ գործող արդյունաբերական և ծառայությունների ոլորտների զարգացման շնորհիվ ամրապնդվեց տարածաշրջանի երկրների ՀՆԱ-ի կառուցվածքը: Արդյունքում արձանագրվեց ՀՆԱ-ի էներգատարության աճի տեմպի նվազում՝ 9%-ից

³ Համաձայն Համաշխարհային Բանկի (ՀԲ) գնահատականների, վերը բերվող ցուցանիշներն ավելին են քան իրական բարելավման ցուցանիշները, քանի որ պաշտոնական վիճակագրությունը լիովին չի արտացոլում ազգային եկամտի աղբյուրները՝ հատկապես ծառայությունների ոլորտում: ՀԲ գնահատումներով, վերջին 15 տարում Չինաստանում ՀՆԱ-ի էներգատարության նվազումը կազմում է տարեկան մոտ 3.4% [1, 3]:



մինչև 5% (80-ականների վերջին): Աճի դանդաղումն ավելի ամրապնդվեց 90-ականներին, կազմելով տարեկան միջին հաշվով 2.4 %, իսկ 1998թ. դա կազմեց ընդամենը 0.6%:

ԱՊՀ տարածաշրջանի պարագայում նշենք, որ նախկին ԽՍՀՄ-ն ի սկզբանե աշխարհի ամենաէներգաանարդյունավետ տարածաշրջանն էր: Այսպես, 1985թ. ԽՍՀՄ ՀՆԱ-ի էներգատարությունը կազմում էր 1867.9 տ.ն.հ./մլն. 1990թ. եվրո, զիջելով ԵՄ տարածաշրջանին ավելի քան 7 անգամ (256.4), ճապոնիային՝ 9.5 անգամ (197.2), ԱՄՆ-ին՝ 4 անգամ (468.0) և գերազանցելով միայն Չինաստանի համապատասխան ցուցանիշը (3382.2): Էներգակիրների և էներգիայի արհեստականորեն ցածր գները, ապահովելով ԽՍՀՄ արդյունաբերության մրցելիզացիոն աճը, միևնույն ժամանակ խրախուսում էին անարդյունավետությունը տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում: 1980-90թթ. այն տատանվում էր 1800-1900 տ.ն.հ. տիրույթում՝ ուղեկցվելով տեսակարար ՀՆԱ-ի դանդաղ աճով: 1990-95թթ. ԽՍՀՄ դեզինտեգրացիային զուգընթաց, էականորեն աճեց ՀՆԱ-ի էներգատարությունը (տարեկան միջին հաշվով 3.6%), ինչն ուղեկցվեց տեսակարար ՀՆԱ-ի ցուցանիշի նույնպիսի էական նվազումով՝ 2581-ից մինչև 1437 1990թ. եվրո/բնակիչ (տես նկ. 3): ԽՍՀՄ փլուզումից ի վեր ԱՊՀ տարածաշրջանի համար առաջին անգամ այս անկումը դադարեց 1996-97թթ., երբ գրանցվեց ՀՆԱ-ի ոչ մեծ աճ: Սակայն, 1998թ. ֆինանսատնտեսական ճգնաժամը մասամբ կասեցրեց այս դրական միտումը:

Ետճգնաժամային տարիներին էականորեն բարելավվեցին ԱՊՀ տնտեսական համակարգի գերակա երկրի՝ Ռուսաստանի Դաշնության

(ՌԴ) ֆինանսատնտեսական ցուցանիշները: Այսպես, 1998-2003թթ. ընդլայնված կառավարության բյուջեի եկամտային մասն աճել է ՀՆԱ-ի հինգ տոկոսային միավորով: Միևնույն ժամանակ դաշնային բյուջեի եկամտային մասն աճել է նույնիսկ ավելի արագ, 2001թ. այն կազմել է ՀՆԱ-ի 17.5%-ը: Սակայն, համաձայն որոշ վերլուծաբանների [7, 8] այս աճը 2000-03թթ. ժամանակահատվածին բնորոշ նավթի միջազգային բարձր գների հետևանք է: Իրոք, համաձայն նշված աղբյուրների, ՌԴ ՀՆԱ-ի առնվազն 5%-ը և կոնսոլիդացված բյուջեի մոտ 80%-ը անմիջականորեն կապված են նավթային արդյունաբերության և նավթի արտահանումների հետ: Արժույթի միջազգային հիմնադրամի ՌԴ բաժանունքի մի բարձրաստիճան փորձագետի կարծիքով, «եկամուտների դինամիկայի առումով, Ռուսաստանը ճգնաժամից հետո ոչ մի բանով չի տարբերվում նավթ արտահանող այլ երկրներից» [8]: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ ՌԴ սոցիալ-տնտեսական համակարգը ներկայումս գտնվում է նավթի միջազգային կոնյունկտուրայից վտանգավոր կախվածության մեջ: Այս հանգամանքը մտահոգիչ է նաև այն բանի համար, որ ԱՊՀ տարածաշրջանի պոտենցիալ «քարշող ուժ» հանդիսացող ՌԴ տնտեսական համակարգի այս կախվածությունն առավել զգայուն է նավթի ներկայիս բարձր գների տիրույթի պարագայում: Այսպես, 2003թ. դաշնային բյուջեի եկամուտների զգայունությունը նավթի 1\$/բարել գնի փոփոխման դեպքում, գների 12-16 \$/բարել տիրույթում կազմել է ՀՆԱ-ի 21%, մինչդեռ գների 20-24 \$/բարել տիրույթում այն արդեն կազմում է 35% [8]: Այլ կերպ ասած, ՌԴ տնտեսական համակարգում բեկումնային և կայուն առաջընթացի համար դեռ անհրաժեշտ է իրականացնել ծավալուն ու տարաբնույթ միջոցառումներ, առաջին հերթին նավթային ոլորտից գատ ՀՆԱ-ի կառուցվածքի ամրապնդման առումով:

Այսպիսով, էներգատնտեսական ցուցանիշների այս համառոտ քննության թերևս ամենակահայտ եզրակացությունը կայանում է քննարկվող տարածաշրջանների և նրանց կազմում գտնվող երկրների միջև պահպանվող անհավասարության մեջ: Ողջ աշխարհի գլոբալ ազդեցատ ցուցանիշների վրա գերակա է ՏՀԶԿ երկրների ազդեցությունը: Միտումների առումով շոշափելի է Ասիական տարածաշրջանի էներգատնտեսական առաջխաղացումը: ՀՆԱ-ի էներգատարության նվազումը բնութագրական միտում է առաջին հերթին ՏՀԶԿ ու Ասիական և մասամբ ԼԱ տարածաշրջանների երկրների համար: Գլոբալ ազդեցատ ցուցանիշների վրա ունեցած ազդեցությամբ, ԽՍՀՄ փլուզումը ավելի մեղմ գործոն հանդիսացավ, քան 1998թ. Ասիական ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները: ԱՊՀ տարածաշրջանի գերակա համակարգը հանդիսացող Ռուսաս-

տանի Դաշնության տնտեսությունը գտնվում է նավթի միջազգային գներից վտանգավոր կախվածության մեջ:

2. Էներգակիրների միջտարածաշրջանային հոսքեր

Էներգիայի/էներգակիրների միջտարածաշրջանային հոսքերը, հանդիսանալով համաշխարհային տնտեսական օրգանիզմի յուրօրինակ «արյունաբեր» համակարգ, առավելապես ցայտուն կերպով բնորոշում են առանձին տարածաշրջանների դերն ու նշանակությունը էներգետիկ, տնտեսական, քաղաքական և մուլտիսկ քաղաքակրթական առումներով: Լինելով կենսական նշանակություն ունեցող գործոն, այս հոսքերը և աշխարհաքաղաքական համակարգը ձևավորող էական բաղադրիչ են, և այս համակարգի ներգործման առարկան: Ուստի, սույն հոդվածի շրջանակներում անհրաժեշտ է, զոնե համառոտ, անդրադառնալ դրանց քննությանը:

Չենվելով [1] տարեկան ժողովածուի տվյալների վրա, աղյուսակ 1-ում բերել ենք 1980-98թթ. ժամանակահատվածում էներգիայի/էներգակիրների միջտարածաշրջանային հոսքերի մասին ընդհանրացված տվյալները: Մեծությունների դրական նշանը համապատասխանում է էներգիայի/էներգակիրների ներկրումներին, իսկ բացասականը՝ արտահանումներին:

Ինչպես հետևում է այս աղյուսակից, 1980-98թթ. ՏՀԶԿ երկրներից գատ էներգակիրների ներկրող են եղել միայն ԿԱԵՎ և Ասիական տարածաշրջանը: ՏՀԶԿ-ն հանդիսացել է գերակշիռ ներկրող տարածաշրջան, որտեղ 1998թ. առաջատարը ԵՄ-ն է (մոտ 723 մլն. տ.ն.հ.), որին հաջորդել են ՀԱԱՄՊ-ը և ԽՕ ՏՀԶԿ-ն (համապատասխանաբար մոտ 339 և 297 մլն. տ.ն.հ.): Քննարկվող ժամանակահատվածում, Ասիական տարածաշրջանը արագորեն դարձավ ծավալուն ներկրող

Աղյուսակ 1. Էներգակիրների միջտարածաշրջանային հոսքերը

Սյն. տ.ն.հ.	1980	1985	1990	1995	1998
1. ՏՀԶԿ, այդ թվում	1233.9	831.1	1113.5	1115	1238.4
1ա. Արևմտյան Եվրոպա, այդ թվում	667	487.9	563.4	508.3	558.7
ԵՄ	688.4	526.3	643.7	651.2	722.9
ԵԱԱՊ	-21.4	-38.5	-80.4	-142.9	-164.2
1Բ. Այլ ՏՀԶԿ, այդ թվում	565.9	343.2	550.2	606.7	679.7
ՀԱԱՄՊ	246	68.9	215.6	249.8	338.8
ԽՕ ՏՀԶԿ	305.7	257.1	306.8	319.5	296.9
2. ԿԱԵՎ	71.6	65.6	77.1	58.4	65
3. ԱՊՀ	-212.2	-219.2	-260	-244.4	-283.4
4. Աֆրիկա	-259.7	-241	-294.9	-302.6	-349.9
5. ՄԱ	-855.1	-395	-701.9	-786.1	-893.4
6. Ասիա	18.4	0	85.3	216.5	269.9
7. ԼԱ	-22.7	-38.6	-51.4	-106.8	-109.3

1998թ. գրանցելով մոտ 270 մլն. տ.ն.հ. ներկրումների ցուցանիշ: Ինչպես և ողջ XX դարի 2-րդ կեսին, այնպես էլ անցած երկու տասնամյակում էներգակիրների հիմնական արտահանողը հանդիսացել է ՄԱ տարածաշրջանը, որին հաջորդել են Աֆրիկան և Նախկին ԽՍՀՄ/ԱՊՀ-ն: Ավելացնենք նաև, որ 1998թ. միջտարածաշրջանային տեղափոխումներն ինքնին, ճիշտ ինչպես և 1980թ. կազմել էին էներգիայի համաշխարհային համախառն սպառման մոտ 18%:


2.1. ՏՀԶԿ տարածաշրջան

Այս տարածաշրջանը 1998թ.-ին սպառել էր էներգակիրների և էներգիայի միջտարածաշրջանային փոխադրումների մոտ 80%-ը, ընդ որում՝ փոխադրումների ընդհանուր ծավալի 81%-ը բաժին էր ընկնում հում նավթին և նավթամթերքներին: Ինչպես հետևում է աղյուսակ 1-ից, 1980-98թթ. էներգակիրների ամենամեծ ներկրողը ԵՄ տարածաշրջանն է՝ ծավալների տարեկան մոտ 2.8% աճով: Հաջորդ տեղը զբաղեցնում է ՀԱԱՄ-ը, որի համար նույն ժամանակահատվածում արձանագրվել է ներկրումների ծավալի նույնիսկ ավելի ինտենսիվ աճ՝ տարեկան մոտ 13%: Այս տարածաշրջանի համար *էներգետիկ ներկրումային կախվածությունը*⁴ 1980թ.-ին կազմել էր 11.5%, որը, 80-ականների առաջին կեսին նվազելով, հասավ 3.3%-ի (1985թ.), այնուհետև հաստատունորեն աճելով՝ 1998թ.-ին հասավ 13.1% ցուցանիշին:

Նկար 4.ա-ում պատկերել ենք ՀԱԱՄ տարածաշրջանի էներգակիրների հոսքերի մանրամասները 1998թ. ցուցանիշների համար: Ինչպես հետևում է այս նկարից, ՀԱԱՄ էներգակիրների ընդհանուր ներկրումներն այդ տարի կազմել են 338.8 մլն. տ.ն.հ. (տես նաև աղյուսակ 1): Ընդ որում, հում նավթի և նավթամթերքների համար առանձին՝ այս ցուցանիշը կազմել է արդեն 391.9 մլն. տ.ն.հ.:

ՀԱԱՄ տարածաշրջան նավթի ներկրումներն իրականացվել են չորս այլ տարածաշրջաններից (տես նկ. 4.բ) և սպառվել են ԱՄՆ-ում: Լինելով ՀԱԱՄ տարածաշրջանի գերակա երկիրը և, առանձին վերցված՝ աշխարհի ամենամեծ տնտեսական համակարգը, ԱՄՆ-ը էներգակիրների, առաջին հերթին հում նավթի և նավթամթերքների, ամենածավալուն ներկրողն է. 1998թ.-ին ԱՄՆ-ը կլանել է համաշխարհային նավթափոխադրումների 26%-ը (մոտ 516 մլն. տ.ն.հ.): Ինչպես հետևում է նկ. 4.բ-ից, այս ծավալի 76%-ը (391.9 մլն. տ.ն.հ.) գոյացել է

⁴ Համաձայն [1, 3, 4]-ի, էներգետիկ ներկրումային կախվածությունը (%) սահմանվում է իբրև էներգիայի/էներգակիրների ներկրում-արտահանումային հաշվեկշռի (տ.ն.հ.) և էներգիայի համախառն ներքին սպառման (տ.ն.հ.) հարաբերությունը: Հոդվածում դա անվանվում է նաև պարզապես «ներկրումային կախվածություն»:




միջտարածաշրջանային ներկրումներից, իսկ 24%-ը՝ ՀԱԱԱՊ տարածաշրջանի այլ երկրների (Կանադա, Մեքսիկա) նավթառաքումներից: ԱՄՆ-ի համար էներգետիկ ներկրումային կախվածությունը 1980թ.-ին կազմել էր 16.7%, 1985թ.-ին՝ 11.2%, իսկ 1998թ.-ին՝ 24.8%՝ 90-ականներին աճելով տարեկան մոտ 4.4%: Նշենք, որ Միջին Արևելքից նավթային ներկրումներն ԱՄՆ 1998թ.-ին կազմել են միջտարածաշրջանային ներկրումների 27.8%-ը և ԱՄՆ նավթային ողջ ներկրումների 21.1%-ը համապատասխանաբար (տես նկ. 4.բ):

ԽՕ ՏՀԶԿ տարածաշրջանն էներգակիրների ներկրումների ծավալներով 1998թ.-ին զբաղեցնում էր 3-րդ տեղը, սակայն այս տարածաշրջանի համար 80-ականների կեսերին արձանագրվել է կրճատում (տես աղյուսակ 1): Այս տարածաշրջանի էներգետիկ ներկրումային կախվածությունը 1997թ.-ին կազմել է 46%, 1980թ. 70%-ի դիմաց: Այն, սկսած 1990թ.-ից, անընդհատ նվազել է հիմնականում Ավստրալիայից էներգակիրների ներկրման և միջուկային էներգիայի օգտագործման ծավալների աճի շնորհիվ (ճապոնիա): Նշենք, սակայն, որ սեփական վառելիքից զուրկ ճապոնիայի ներկրումային կախվածությունը շարունակում է մնալ բարձր՝ 78% 1998թ.-ին (88% 1980թ.-ին): Հատկանշական է, որ ԽՕ ՏՀԶԿ տարածաշրջանը գտնվում է Միջին Արևելքից էներգետիկ ներկրումային էական կախվածության մեջ: Այսպես, 1998թ.-ին ՄԱ-ից ներկրված հում նավթը և նավթամթերքը (218 մլն. տ.ն.հ.) կազմել են այդ տարի ԽՕ ՏՀԶԿ տարածաշրջան էներգակիրների ներկրման 73.4%-ը:

2.2. Ասիական տարածաշրջան

Աղյուսակ 1-ում բերվող տվյալները վկայում են Ասիական տարածաշրջան էներգակիրների ներկրումների շեշտակի աճի մասին: Այս ցուցանիշը 1980թ.-ին արձանագրված չնչին ծավալից (18.4 մլն. տ.Ն.հ.) աճել է մոտ 15 անգամ և 1998թ.-ին կազմել է մոտ 270 մլն. տ.Ն.հ.: Ընդ որում, քննարկվող ժամանակահատվածում (1980-98թթ.) ներկրումների առավելագույն ծավալն Ասիայի համար արձանագրվել է 1997թ.-ին (304 մլն. տ.Ն.հ.): Հասկանալի է, որ 1998թ. ցուցանիշի անկումը պայմանավորված էր ֆինանսատնտեսական ճգնաժամով: Դատելով ծավալվող միտումներից, կարելի է եզրակացնել, որ մոտ ապագայում՝ մինչև 2010թ., էներգակիրների ներկրումների ծավալով Ասիան կհանդիսանա աշխարհում 2-րդ տարածաշրջանը՝ առաջ անցնելով ՀԱԱՊ-ից և ԽՕ ՏՀԶԿ-ից, զիջելով միայն ԵՄ տարածաշրջանին:

Ասիական տարածաշրջանի արագ զարգացող և ամենաինտենկարային շուկան Չինաստանն է: Վերջին երկու տասնամյակում էներգատնտեսական հիմնական ցուցանիշների տպավորիչ աճի հետ մեկտեղ, Չինաստանը 1993թ.-ից արագորեն վերածվում է էներգակիրներ ներմուծող երկրի (տես նկ. 5.ա և բ): Այսպես, համաձայն Միջազգային էներգետիկ գործակալության (ՄԷԳ) գնահատականների [9], առաջիկա 25 տարիներին Չինաստանում ակնկալվում է ԷՀՆՍ 4.5%, իսկ, մասնավորապես, հում նավթի սպառման առումով՝ ավելի քան 8% տարեկան աճ: Չնայած Չինաստանն ունի սեփական նավթահանման համար հեռանկարային տարածքներ (Թարիմի նավթային ավազան, Հարավ-Չինական ծովի շելֆ), այս պաշարների իրացումը զգալի ժամանակ և ներդրումներ կպահանջի: ՄԷԳ-ի նշված ուսումնասիրությունում ակնկալվում էր, որ 2000թ. հում նավթի





ներկրման պահանջարկը Չինաստանում կկազմի մոտ 50 մլն. տ. կամ մոտ 0.9-1.0 մլն. բ./օր իսկ 2010թ.՝ արդեն մոտ 100 մլն. տ. (2 մլն. բ./օր, տես նկ. 5.ա): Սակայն, Չինաստան հում նավթի ներկրումների ծավալների աճի փաստացի տեմպերը մի փոքր գերազանցեցին [9]-ում բերվող գնահատումները: Համաձայն [1, 2]-ի, 1998-99թթ. արդեն արձանագրվել էր 50 մլն. տ.մ.հ. ցուցանիշ՝ 2 տարի ավելի վաղ քան կանխատեսվում էր ՄԷԳ-ի նշված ուսումնասիրությունում (տես նկ. 5.բ):

Ներկայումս հում նավթի ներկրումները Չինաստան կատարվում են հիմնականում ՄԱ-ից: Սակայն համաձայն [9]-ի գնահատականների, «Պեկինը ծավալուն ջանքեր կգործադրի նավթի ներկրումների ուղիների բազմազանեցման ուղղությամբ և նախապատվությունը կտա այն ճանապարհներին, որոնց վրա կարող է ապահովել իր ռազմավարական հսկողությունը»: Այսպիսի մոտեցումը, բացի սեփական պաշարների իրացումից, ենթադրում է չինական ընկերությունների զանգվածային ներգրավումը միջազգային նավթահանման ծրագրերին: Եվ զարմանալի չէ, որ 90-ականների վերջին Չինաստանի ազգային նավթային ընկերությունը (ՉԱՆԸ) ներգրավվեց նավթի արդյունահանման բաժանման գործարքներում Կանադայում, Պերուում, Վենեսուելայում, Ռուսաստանում, Մոնղոլիայում, Թայլանդում, Պապուա-Նոր Գվինեայում և Սուդանում: Այս առումով հետաքրքրական է \$1.2 մլրդ. արժողությամբ պայմանագրի կնքումը ՉԱՆԸ-ի կողմից Իրաքի «Ահդաբ» նավթի հանքավայրի հետախուզման և շահագործման համար: Բացի այդ, ՉԱՆԸ-ի ներկայացուցիչները բազմիցս հետաքրքրություն են ցուցաբերել Ղազախստանի «Ակտոբենոնայ» և «Ուզեն» նավթի հանքավայրերի շահագործման, ինչպես նաև տարեկան 20 մլն. տ. նախնական տարողունակությամբ Ղազախստան-Չինաստան նավթամուղի կառուցման ծրագրի նկատմամբ:

2.3. Միջին Արևելքի տարածաշրջան

Ինչպես հետևում է աղյուսակ 1-ից, 1980-98թթ. արտահանումների ծավալների առումով բացարձակ առաջատարը շարունակում է մնալ ՄԱ տարածաշրջանը (893 մլն. տ.մ.հ.), որին 1998թ. հաջորդել են Աֆրիկան (350), ԱՊՀ-ն (283) և ԵԱԱՄ-ը (164): Հում նավթի և նավթամթերքի արտահանումը կազմել է 1998թ. ողջ արտահանումների 81%-ը, բնական գազի արտահանումը՝ 12%-ը և կոշտ վառելիքինը՝ 7%-ը: Եվ վերջապես, եթե 1998թ.-ին նավթի արտահանումներում շարունակում էին գերիշխել ՆԱԵԿ երկրները, ապա բնական գազի համաշխարհային շուկայի 42%-ը ապահովում էր միայն Ռուսաստանի Դաշնությունը:

Նկար 6.ա-ում պատկերված է 1980-98թթ. ՄԱ տարածաշրջանի



ՆԱԵԿ անդամ երկրների և տարածաշրջանի այլ երկրների հուն նավթի առաջնային արդյունահանման ծավալների փոփոխման դինամիկան [1]: Ինչպես հետևում է այս նկարից, 1980թ.-ից սկսած արձանագրվել է ծավալների տևական անկում՝ պայմանավորված հիմնականում Իրան-իրաքյան 8-ամյա պատերազմով: Արդյունահանման ծավալները սկսել են կայունորեն աճել միայն 1986թ.-ից և 1998թ.-ին կազմել են արդեն մոտ 1100 մլն. տ.ճ.հ.: Պարսից ծոցի 1991թ. պատերազմի ժամանակ նավթի առաջնային արդյունահանումն անկում էր ապրել Իրաքում և Քուվեյթում: Այդ անկումը, սակայն, հաջորդ տարիներին փոխհատուցվել էր Ս. Արաբիայում, Իրանում, Մ.Ա.Է.-ում արտադրանքի ծավալների ոչ մեծ, բայց կայուն աճով: Աճը հատկապես նշանակալից էր ՄԱ-ի ոչ-ՆԱԵԿ անդամ երկրներում, որոնց տարածաշրջանային մասնաբաժինը 1980թ. 1% ցուցանիշի դիմաց 1998թ.-ին կազմել է 9% (տես նկ. 6.բ.): Մոտ երկու տասնամյակում (1980-98թթ.) հուն նավթի առաջնային արդյունահանումը կրկնապատկվել է Օմանում և զրեթե եռապատկվել Սիրիայում: 1987թ.-ից սկսվել է հուն նավթի ծավալուն արդյունահանում Եմենում՝ այն զրեթե զրոյական մակարդակից 1998թ.-ին հասել է մոտ 20 մլն. տ.ճ.հ. ցուցանիշի:

Ինչպես հետևում է նկ. 6.ա-ից, ՄԱ տարածաշրջանում հուն նավթի առաջնային արդյունահանման ծավալների առումով որոշիչ դերը պատկանում է Ս. Արաբիային: Այս երկրի տարածաշրջանային մասնաբաժինը 1980թ. կազմել է ավելի քան 50%, 1998թ.-ին այն նվազել է մին-

չև 40%-ի, բայց քննարկվող ժամանակահատվածում երբեք չի նվազել 1/3 ցուցանիշից: Հատկանշական է այն հանգամանքը, որ մինչև 1991թ., այս երկրում հում նավթի արդյունահանման տատանումները որոշիչ կերպով բնութագրել են ողջ տարածաշրջանի գումարային ցուցանիշների փոփոխությունները (այդ մասին տես ստորև, հոդվածի 3-դ մասում): Ծոցի պատերազմից հետո, 1992-98թթ. դիտարկվել է Ս. Արաբիայի, Իրանի և Մ.Ա.Է-ի նավթի արդյունահանման ծավալների հաստատուն կայունացում:

Ընդհանրապես ՆԱԵԿ երկրների նավթահանումների համաշխարհային մասնաբաժինը 1973թ.-ին կազմել էր 54%, 1980թ.-ին՝ 44%, իսկ 1998թ.-ին՝ 42%: Ընդ որում, ՆԱԵԿ մասնաբաժնի նվազագույն մակարդակը գրանցվել է 1985թ.-ին՝ ընդամենը 29%: Հաջորդ՝ 1986թ.-ից, սկսվել է Պարսից Ծոցից նավթամատակարարումների զգալի ու կայուն աճ, որի հետևանքով 1998թ.-ին արձանագրվել է 1971թ.-ից ի վեր գրանցված ռեկորդային ցուցանիշ՝ ավելի քան 1100 մլն. տ.ն.հ.:

Հենվելով [9, 10] ժողովածուների վրա, աղյուսակ 2-ում բերված են 1992-98թթ. ՄԱ-ից այլ տարածաշրջաններ հում նավթի արտահանումների ծավալների մասին տվյալները: Բացի այս, աղյուսակում բերված են ԱՄՆ և ԵՄ հում նավթի ներկրումների ծավալները՝ իրականացված ոչ ՄԱ տարածաշրջանից: Բերված են նաև 1998 և 2000 թվականներին հրատարակված [9, 10] ժողովածուներում կատարված կախատեսումները 2000թ. և 2005թ. համար: Ինչպես հետևում է աղյուսակ 2-ից, ՄԱ-ից արտահանվող նավթի մեծ մասը սպառվել է Ասիական տարածաշրջանում: Մինչդեռ ՄԱ-ից դեպի ԱՄՆ հում նավթի առաքումները կազմել էին ընդհանուր առաքումների միայն 14.1%-ը: Հատկանշական է այս ցուցանիշի նվազումը՝ 1998թ.-ին դա կազմել է արդեն 11.3%, իսկ 2005թ.-ին կանխատեսվում է 6.2 % ցուցանիշ: Բացի այդ, ՄԱ-ից ԱՄՆ

Աղյուսակ 2. Հում նավթի արտահանումները. փաստացի ծավալներ (1992-1998 թթ.) և կանխատեսում (2000-2005թթ.)

Մլն. Բ./օր	1992	1993	1994	1995	1996	1997	1998	2000	2005
<i>Միջին Արևելքից հում նավթի արտահանումները</i>									
դեպի Ասիա	6.24	6.56	7.04	7.44	8	8.8	9.4	10.24	12.8
դեպի ԱՄՆ	1.65	1.68	1.74	1.5	1.6	1.9	1.65	1.05	1.05
դեպի ԵՄ	3.8	4.15	3.65	3.6	3.4	3.45	3.6	2.85	3.2
<i>ԱՄՆ. Հում նավթի ներկրումները Միջին Արևելքից և Լատինական Ամերիկայից</i>									
ՄԱ-ից	1.65	1.68	1.74	1.5	1.6	1.9	1.65	1.05	1.05
ԼԱ-ից	1.89	2.18	2.32	2.63	3.03	3.08	3.34	3.89	4.21
<i>ԵՄ. Հում նավթի ներկրումները Միջին Արևելքից և ԱՊՀ -ից</i>									
ՄԱ-ից	3.8	4.15	3.65	3.6	3.4	3.45	3.6	2.85	3.2
ԱՊՀ-ից	0.87	1.05	1.21	1.15	1.28	1.48	1.41	1.23	2.05

ներկրված հում նավթի ծավալները 1992թ.-ին կազմել են ԼԱ-ից ԱՄՆ ներկրումների 87.3%-ը, 1998թ.-ին՝ 49.4%-ը, իսկ 2005թ. համար կանխատեսվում է 25% ցուցանիշ: ՄԱ-ից ծավալներով 2-րդ ներկրողը եղել է ԵՄ-ը: Սակայն եթե 1992թ.-ին այդ ներկրումները 4.4 անգամ գերազանցում էին ԱՊՀ-ից ԵՄ ներկրումների ծավալներին, ապա 1998թ.-ին այդ գերազանցումը կազմել էր արդեն 2.5 անգամ, իսկ 2005թ. կանխատեսվում է ընդամենը 1.6 անգամ գերազանցում:

Այսպիսով, հստակ նկատելի է Միջին Արևելքի նավթից ԱՄՆ և ԵՄ տարածաշրջանների ներկրումային կախվածության թուլացման միտումը, որը հիմնված է նավթի ներկրումային այլ ուղիներից հոսքերի ծավալների աճի վրա:

Ավարտելով հում նավթի փոխադրումների մասին տվյալների համառոտ քննարկումը, անհրաժեշտ է ներկայացնել նաև այս կարևորագույն էներգակրի համաշխարհային պաշարների և այդ պաշարների բաշխվածության մասին ամփոփ տեղեկություններ: Այսպես, աղյուսակ 3-ում բերված են 2003թ. հրատարակված *“Բրիթիշ փեթրոլիում”* ընկերության տարեկան տեղեկատուում զետեղված տվյալները որոշ երկրների հում նավթի ապացուցված պաշարների (ա. պ.) մասին [11]: Աղյուսակում նշված են 2002թ. արձանագրված նավթահանումների մակարդակը (մլն. բարել/օր), ինչպես նաև այն ժամանակահատվածը, որի ընթացքում կսպառվեն հում նավթի ա. պ.՝ նավթահանումների ներկայիս մակարդակի պահպանման դեպքում: Համեմատության համար բերված են նաև ողջ աշխարհի համար ստացված միջին ազրեզատ ցուցանիշները:

Ինչպես հետևում է այս աղյուսակից, նշված 10 երկրներում նավթի ա. պ. կազմում են համաշխարհային ցուցանիշի 83.2%-ը (892.5 մլրդ.

Աղյուսակ 3. Հում նավթի ապացուցված պաշարները աշխարհում


	Հում նավթի ապացուցված պաշարները	Արդյունահանման ծավալները 2002թ	Ա. պ. սպառման տևողությունը	Տարածաշրջան
	մլրդ. բ.	մլն. բ./օր	տարի	
Իրաք	112.5	2.1	153	ՄԱ
Քուվեյթ	97.5	1.9	145	ՄԱ
Մ.Ա.Է.	97.5	2.24	123	ՄԱ
Ս. Արաբիա	270	8.9 (8.68)	86	ՄԱ
Վենեսուելա	82.5	3.15	74	ԼԱ
Իրան	90	4.85	73	ՄԱ
Լիբիա	30	1.44	59	Աֆրիկա
Ողջ աշխարհ	1072.5	73.85	41	-
Նիգերիա	22.5	1.92	33	Աֆրիկա
ՌԴ	60	7.7	22	ԱՊՀ
ԱՄՆ	30	7.8	11	ՀԱԱԱՊ


բարել): Ընդ որում, աղյուսակում նշված ՄԱ տարածաշրջանի երկրների մասնաբաժինը կազմում է 62.2% (667.5 մլրդ. բարել): Բացարձակ ծավալների, ինչպես նաև արդյունահանման ներկայիս մակարդակի առումով աշխարհի առաջատարը հանդիսանում է Ս. Արաբիան (270 մլրդ. բարել, 8.9 մլն. բ./օր), որին ա. պ. ծավալների առումով հաջորդում է Իրաքը (112.5 մլրդ. բարել): Հատկանշական է, որ ա. պ. սպառման տևողության առումով Իրաքը զբաղեցնում է առաջին տեղը (153 տարի), մինչդեռ Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ-ի համար այդ ցուցանիշը կազմում է համապատասխանաբար 22 և 11 տարի: Ավելացնենք, որ այս ցուցանիշը ՄԱ տարածաշրջանի՝ աղյուսակում նշված 5 երկրների համար կազմում է միջինը 116 տարի:

Այսպիսով, հենվելով նավթի նույնիսկ միայն ապացուցված պաշարների գնահատականների վրա, կարելի է եզրակացնել, որ նավթը ՄԱ տարածաշրջանի համար կհանդիսանա էներգետիկ և ռազմավարական երկարաժամկետ գործոն:

2.4. ԽՍՀՄ/ԱՊՀ տարածաշրջան

ԽՍՀՄ/ԱՊՀ տարածաշրջանը 1980-98թթ. էներգակիրներ արտահանող թվով 3-րդ տարածաշրջանն էր: Արտահանումների ընդհանուր ծավալները քննարկվող ժամանակահատվածում փոփոխվել են ոչ կտրուկ (տես աղյուսակ 1)՝ 212-ից (1980թ.) աճելով մինչև 283 մլն. տ.ն.հ. 1998թ.-ին: Սակայն էականորեն փոխվել է արտահանումների կառուցվածքը: Այսպես, հենվելով [1]-ի վրա, նկ. 7.ա և բ-ում պատկերել ենք 1980-98թթ. ԽՍՀՄ/ԱՊՀ-ից արտահանված նավթի և բնական գազի ծավալների արժեքները, ինչպես նաև այդ էներգակիրների ներքին





համախառն սպառման ծավալները (ՆՅՍ): Ինչպես հետևում է նկ. 7.ա-ից, 1980-1985թթ. նավթի ներքին սպառման և արտահանումների ծավալները հարաբերականորեն կայուն էին և կազմում էին համապատասխանաբար մոտ 430 և 160-170 մլն. տ.ճ.հ.: 1987-89թթ. դիտարկվել է նավթի արտահանումների աճ, որին, 1990-98թթ. հետևել է նավթի ՆՅՍ ծավալների կայուն և արտահանումների մասնաբաժնի աճ:

Դրան հակառակ, բնական գազի ՆՅՍ և արտահանումների ծավալները կայունորեն աճել են սկսած 1980թ.-ից՝ իրենց առավելագույն արժեքին հասնելով 1991թ.-ին: ԽՍՀՄ/ԱՊՀ տարածաշրջանում ՆՅՍ մեջ այս հիմնական երկու էներգակիրների համամասնության էական փոփոխությունն առավել ցայտուն երևում է նկ. 8-ում, որտեղ հիմնվելով նույն աղբյուրի վրա պատկերել ենք 1980-98թթ. նավթի և բնական գազի ՆՅՍ բացարձակ ծավալների փոփոխությունը մլն. տ.ճ.հ.-ով (նկ. 8.ա) և այդ էներգակիրների համամասնությունը %-ով (նկ. 8.բ): Ինչպես հետևում է այս նկարներից, սկսած 1984թ.-ից, ներքին սպառման մեջ բնական գազի մասնաբաժինը հավասարվել է նավթի մասնաբաժնին, որից հետո գերազանցել է նրան և 1998թ. մոտեցել է 75% ցուցանիշին:

ԽՍՀՄ/ԱՊՀ տարածաշրջանում նավթի արդյունահանման ծավալների այս նվազումը և Ռուսաստանի Դաշնությունում նավթի ապացուցված պաշարների սահմանափակությունը (տես աղյուսակ 3) վերջին տարիներին գտնվում են փորձագետների ուշադրության կենտրոնում: Այսպես, [9] աշխատությունում, հենվելով ՌԴ էներգետիկայի և վառելիքի նախարարության տվյալների վրա, եզրակացվել է, որ 1996թ. ցուցանիշը պահպանելու համար 1997-2007թթ. նավ-

թային ոլորտում անհրաժեշտ է տարեկան իրականացնել \$13 մլրդ. կապիտալ և շահագործման ներդրումներ, «այլապես, 2005թ. նավթահանումների ծավալները կնվազեն տարեկան 200 մլն. տ. ցուցանիշից»: Այս տեսակետը հաստատվում է նաև ռուս փորձագետների կողմից [7], որոնք նշում են, որ ներկայումս Ռուսաստանում փաստորեն շահագործվում են դեռ ԽՍՀՄ տարիներին հետախուզված նավթային պաշարները: Իսկ որպեսզի պահպանվի ներկայիս նավթահանումների մակարդակը, անհրաժեշտ է, որ նոր պաշարների հետախուզման տեմպերը 1.2-1.5 անգամ գերազանցեն ա. պ. շահագործման տեմպերը:

Այլ խոսքերով, «եթե իրավիճակը շարունակվի այսպես, ապա 2010թ. նավթահանումների ծավալերի անկումը Ռուսաստանում կարելի է ապացուցված համարել» [7]: Հասկանալի է, որ իրադրությունը բեկելու համար անհրաժեշտ են երկարաժամկետ ներդրումներ: Համաձայն Նավթի միջազգային գործակալության (IPA) փորձագետների, նավթային ոլորտի 2003թ. մակարդակի պահպանման համար անհրաժեշտ է առաջիկա 18 տարիներին կատարել \$500-700 մլրդ. ներդրումներ:

Այսպիսով, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ՌԴ/ԱՊՀ տարածաշրջանը կարող է բեկել նավթի արդյունաբերման (ՆՀՍ և արտահանում) կրճատման միտումը միայն ծավալուն ֆինանսական երկարաժամկետ ներդրումների, ակտիվ հետախուզական աշխատանքների և տրանսպորտային ենթակառուցյունների զարգացման դեպքում: Բնական գազի արտահանումների առումով՝ այս տարածաշրջանը կպահպանի իր էական նշանակությունը առաջին հերթին ԵՄ, ԱՊՀ և այլ ՏՀԶԿ տարածաշրջանների համար:

Ի մի բերելով վերը կատարված դիտարկումները, առանձնացնենք հետագա քննարկման համար կարևոր հետևյալ եզրակացությունները: Անցած տասնամյակում.

1. Բարելավվել են համաշխարհային էներգատնտեսական ազդեցատ ցուցանիշները՝ ՏՀԶԿ տարածաշրջանի երկրների գերակա ազդեցության շնորհիվ: Սակայն, 1980թ. սկսած առաջին անգամ 1998թ.-ին արձանագրվել է համաշխարհային մակարդակով էներգիայի սպառման ոչ մեծ, բայց նկատելի անկում, ինչը հանդիսացել է Ասիական ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքը:

2. ՏՀԶԿ-ն շարունակում է մնալ աշխարհի ամենահարուստ (ՀՀՆԱ-ի ավելի քան 75%) և էներգաարդյունավետ տարածաշրջանը (ԵՄ՝ 232, այլ ՏՀԶԿ՝ 347 տ.ն.հ./մլն. 1990թ. Եվրո): 1998թ.-ին նա սպառել է էներ-

գակիրների միջտարածաշրջանային տեղափոխումների 80%-ը: Ներկրումների ծավալներով առաջատարը ԵՄ-ն է (մոտ 723 մլն. տ.ն.հ.), որին հաջորդել են ՀԱԱՄ-ը և ԽՕ ՏՀԶԿ-ն (մոտ 339 և 297 մլն. տ.ն.հ. համապատասխանաբար):

3. Ասիական տարածաշրջանը հանդիսացավ համաշխարհային էներգատնտեսական զարգացման հիմնական քարշող ուժը: Ասիան կրկնապատկեց ՀՅՆԱ-ում իր մասնաբաժինը: Շարունակվում է այս տարածաշրջանի երկու հսկաների՝ Չինաստանի և Հնդկաստանի զարգացման տպավորիչ տեմպը: Ասիական տարածաշրջանն արագորեն դառնում է էներգիայի/էներգակիրների ներկրող՝ գոյացնելով այս ասպարեզում ամենաարագ զարգացող և ամենածավալուն շուկան:

4. Հուն նավթը շարունակում է մնալ որպես ամենահիմնական առաջնային էներգակիր: Միևնույն ժամանակ արձանագրված է կարևորությամբ 2-րդ էներգակրի՝ բնական գազի մասնաբաժնի էական աճ՝ թե սպառման և թե միջտարածաշրջանային էներգափոխադրումների մասով: Հուն նավթի համաշխարհային առևտրում մրցակցությունը ձևավորող հիմնական գործոններ եղան.

- համաշխարհային մակարդակով նավթի սպառման ծավալների աճը, որը հատկապես ինտենսիվ էր Ասիական և ԽՕ ՏՀԶԿ տարածաշրջաններում՝ չնայած ասիական ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներին,

- Պարսից Ծոցից առաքվող հուն նավթի մատակարարումներից ՏՀԶԿ և Ասիական տարածաշրջանների կախվածության աճը, չնայած ՀԱԱՄ և ԵՄ ներկրումների ուղիների բազմազանեցմանն ուղղված ծավալուն ճիգերին:

5. Պարսից Ծոցի ՆԱԵԿ երկրները շարունակում են նավթամատակարարումների առաջատարներ մնալ: Սակայն, համաշխարհային մակարդակով դիտարկվում է ՆԱԵԿ-ի մասնաբաժնի նվազում:

6. Քննարկվող ժամանակահատվածում առավել ցայտուն կերպով դրսևորվեցին նաև էներգետիկ ոլորտների գործունեության ճկունության և մրցունակության բարձրացման, ազատականացման և առևտրականացման միտումները, ՀՅՆԱ-ի էներգատարության նվազումը, ՏՀԶԿ երկրներում ՄԱ տարածաշրջանից ներկրումային կախվածության թուլացումը՝ առաջին հերթին էներգակիրների ներկրումների ուղիների բազմազանեցման շնորհիվ, ինչպես նաև սեփական վերականգնվող ռեսուրսների ծավալուն օգտագործումը և միջուկային էներգետիկայի զարգացումը (ԽՕ ՏՀԶԿ երկրներ):

3. Էներգետիկա և քաղաքականություն

Հենվելով վերը կատարված եզրակացությունների վրա, կարելի է այնպես, որ զարգացած և զարգացող երկրների միջև անջրպետի դանդաղ, բայց նկատելի նվազման միտումների հետ մեկտեղ⁵, արդի աշխարհի դիմագիծը բնութագրող ամենամշակակալից փաստերից մեկը շարունակում է մնալ անհավասարությունը և «ոսկե միլիարդի» գոյությունը: Այս պատկերը բարդանում է տասնամյակներ տևած ԽՍՀՄ-Արևմուտք գլոբալ հակամարտության հետևանքներով և նոր, «քաղաքակրթական» հակամարտությունների գոյացմամբ [12]: Կոմունիստական տնտեսահամակարգի փլուզման հետևանքները, ինչպես նաև զարգացած երկրների կողմից այլ երկրների նկատմամբ վարվող քաղաքականության մեջ «ռեսուրսային կցորդի» տարրի տակավին առկայությունն էլ ավելի են խճողում պատկերը: Բոլոր այս գործոններն ակտիվորեն դրսևորվում են մեր տարածաշրջանում՝ Հայաստանի առջև անմիջականորեն լուրջ խնդիրներ և մարտահրավերներ գոյացնելով:

Նման իրավիճակի գոյացման պատճառների նույնիսկ համառոտ քննությունը պահանջում է առանձին ուսումնասիրություն: Այստեղ նշենք միայն, որ ստեղծված իրողությունը ոչ-ՏՀԶԿ երկրների մոտ առաջացնում է հակադրվելու ուժեղ կամք, ապա հակազդեցության գործուն մեխանիզմների կիրառում՝ տխրահռչակ «ասիմետրիկ պատասխանի» տրամաբանության ներքո: Արդյունքում, երևան եկան անցած տասնամյակների և ներկայիս ամենավտանգավոր երևույթները՝ միջուկային, էներգետիկ և ահաբեկչական միջ- և ներտարածաշրջանային շանտաժի կործանարար քաղաքականությունները: Նրանք մռայլեցին անցած դարաշրջանի ավարտը և նոր հազարամյակի չարագույժ նախերգանքը հանդիսացան:

Ռազմամիջուկային երկուստեք շանտաժի քաղաքականությունը ծայր առավ ԽՍՀՄ-Արևմուտք գլոբալ հակամարտության տարիներին: Մեծապես խթանվելով 1955-90թթ. ծավալված ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի, Չինաստանի և արևմտաեվրոպական որոշ ընկերությունների ռազմամիջուկային ու հրթիռաշինական տեխնոլոգիաների «արտահոսքի» անպատասխանատու քաղաքականությամբ: Այն ընկավ 3-րդ աշխարհում ծավալված ներտարածաշրջանային գերիշխման համար մղվող պայքարի պարարտ հողի վրա՝ վերջինիցս ստանալով նոր թափ ու ընդլայնման միտում: Այժմ դա առավել սրությամբ դրսևորվում է Հյուսիսային Կորեայի և Իրանի համապատասխան ծրագրերի շուրջ ծավալվող վտանգավոր զարգացումներում:

⁵ Քանցունում (Մեքսիկա) 2003թ սեպտեմբերին կայացած Համաշխարհային առևտրի կազմակերպության համաժողովի անպտուղ աշխատանքներից հետո կարելի է ակնկալել, որ այս միտումները կդանդաղեն և կխափանեն 2005թ համար նախատեսված ցուցանիշները:

Չափազանց հատկանշական է այս երևույթների փոխկապակցվածությունը և նրանց սերտաճունը «ազգային անվտանգություն» հասկացության հետ: Եվ զարմանալի չէ, որ սեփական ռազմամիջուկային ծրագրի անհրաժեշտությունը հյուսիս-կորեական բարձր-աստիճան պաշտոնյաները հիմնավորում են ազգային և, առաջին հերթին, էներգետիկ անվտանգության հրամայականներով: Մանուլից հայտնի է, որ սեփական ռազմամիջուկային ծրագրի կասեցման համար Փենյանը որպես նախապայման առաջարկում է երկու էներգետիկ ռեակտորների կառուցումը գումարային 2000 ՄՎտ տեղակայված հզորությամբ, իսկ մինչ այդ պահանջում է երաշխավորել տարեկան 500 հազ. տ. հում նավթի ներկրումներն այդ երկիր:

Ինչևիցե, զուտ ռազմամիջուկային շանտաժի քաղաքականությունը և համապատասխան տեխնոլոգիաների տարածման երևույթների քննությունը դուրս է սույն հոդվածի շրջանակներից. դա ավելի հանգամանալից քննարկվում է մեր այլ աշխատություններում [13]: Այստեղ, սակայն, ավելորդ չէ կրկնել այս, և բազմաթիվ այլ ուսումնասիրությունների եզրակացություններից մեկը. անցած տասնամյակների իրողությունում բոլոր այն երկրները, որոնք ունեին հստակ արտահայտված քաղաքական կամք՝ սնվող տարածաշրջանային գերիշխման համար ծավալված հակամարտություններից, կոշտ ներքին սոցիալ-քաղաքական հասարակարգ և ՋՆԱ-ի աճի բավարար տեմպ (և/կամ արտաքին հումքատեխնոլոգիական օժանդակություն), կարող են դառնալ, և դառնում են ռազմամիջուկային տերություններ: Օրինակներ՝ Իսրայել, Չարավային Աֆրիկա, Չնդկաստան, Պակիստան, Յուսիսային Կորեա, Իրան և այլն:

Մեզ, սակայն, առավել հետաքրքրում է մի այլ դրույթի քննարկումը, համաձայն որի՝ բոլոր այն տերությունները, որոնք ունեն հանածո էներգակիրների (առաջին հերթին՝ ածխաջրատների) էական պաշարներ, որոնց արտահանումը զգալի կախվածության մեջ է դնում այլ երկրներին կամ տարածաշրջաններին, միտված են, և օգտագործում են այս հանգամանքն իրենց աշխարհաքաղաքական և ռազմավարական նպատակների իրականացման համար:

Համարժեք պատմական հեռանկարում այս դրույթի քննարկումն անհրաժեշտ է սկսել Մերձավոր և Միջին Արևելքում 2-րդ Համաշխարհային պատերազմի ավարտից հետո ծավալված գործընթացների գոնե հակիրճ քննությունից⁶: Քանզի հենց այստեղ և այդ ժամանակ ձևավորվեց «էներգետիկ» գործոնի աշխարհաքաղաքական կիրա-

⁶ Մեզ հետաքրքրող համատեքստում այս դրվագների համառոտ ժամանակագրությունը բերվում է սույն հոդվածի «Հավելվածում»: Նա կազմված է հիմնականում [14] աշխատության հիման վրա: Լրացուցիչ աղբյուրները նշվում են հատուկ:

ռուսը, ուժ առավ ու կոփվեց «Էներգետիկ շանտաժի» քաղաքականությունը:

Մեր պատկերացումներով՝ իր զարգացման ընթացքում նա անցավ մի քանի փուլ, որոնք պայմանականորեն կարելի է կոչել՝ Գիտակցման փուլ (1950-60թթ.), Պարզունակ արգելանքի (Էմբարգոի) փուլ (1966-67թթ.), Համակարգված արգելանքի փուլ (1971-74թթ.) և Գլոբալացման փուլ (1980թ.-ից մինչ օրս):

3.1. Գիտակցման փուլ (1950-60թթ.)

Սկսելով առաջին փուլի հատկանշական երևույթների քննությունը, հիշեցնենք այդ ժամանակահատվածի ամենաէական տարածաշրջանային գործոնները՝ Իսրայել պետության հիմնադրումը (1947թ.) և արաբա-իսրայելական հակամարտության սկիզբը; բրիտանական գաղութատիրական համակարգի փլուզումը և արաբական ինքնագիտակցության զարթոնքը; տարածաշրջանում ԽՍՀՄ էքսպանսիան և դրան Արևմուտքի ու ԱՄՆ-ի հակազդումը:

Մերձավոր Արևելքում նավթա-էներգետիկ գործոնը մեծ աշխարհաքաղաքականություն մուտք գործեց Սուեզի ճգնաժամի և արաբա-իսրայելական 2-րդ պատերազմին նախորդած տարիներին: 2-րդ Համաշխարհային պատերազմից հետո իրանական նավթը Արևմտյան Եվրոպայի վերակենդանացման և զարգացման էներգետիկ հենքն էր: Այդ նավթը Եվրոպա էր տեղափոխվում զրեթե ամբողջապես Սուեզի ջրանցքով: Եվ զուր չէ, որ «Բրիտանական քաղաքականությունը տարածաշրջանում հիմնված էր երկու սյուների վրա: Առաջինն Իրանն էր՝ «Անգլո-իրանյան նավթային համատեղ ընկերության» հետ մեկտեղ, մյուսը՝ Եգիպտոսը, որպես նավթամատակարարումների անխափանությունը երաշխավորող ռազմավարական բազա» [15]:

Այս համակարգին առաջին հարվածը հասցվեց 1951թ.-ին՝ Իրանի վարչապետ Մոսադիկի՝ երկրի նավթային արդյունաբերությունն ազգայնացնելու որոշմամբ: Հաջորդ տարում Եգիպտոսում գահընկեց եղավ բրիտանամետ Ֆարուկ թագավորը և իշխանության գլուխ կանգնեց զնդապետ Գ. Ա. Նասերը՝ բրիտանական գաղութային համակարգի և աշխարհի երկբևեռության դեմ գործող այդ ականավոր մարտիկը: Ասուանի հիդրոհամգույցի շինարարությանը ֆինանսատեխնիկական աջակցություն ցույց տալու ԱՄՆ մերժումից հետո, Նասերը, ընտրելով Արևմուտքը խոցող ամենացավոտ կետը, հայտարարում է Եգիպտոսի կողմից Սուեզի ջրանցքի ազգայնացումը (1956թ. հունիս): Մինչ այդ, էականորեն խաթարվել էր տարածաշրջանի ռազմավարական հավասարակշռությունը, երբ 1955թ.-ին սկսվեցին Եգիպտոս սպառազինության ծավալուն մատակարարումները ԽՍՀՄ-ից և Չեխոսլովա-

կիայից: Դա «3-րդ աշխարհի» երկրներին ԽՍՀՄ առաջին լուրջ ռազմական օգնությունն էր և նշանավորում էր ԽՍՀՄ-Արևմուտք, իսկ, այնուհետև՝ ԽՍՀՄ-ԱՄՆ գլոբալ հակամարտության իրողությունների ներմուծումը տարածաշրջան: Կանգ չառնելով 1956թ. հոկտեմբերին ծայր առած արաբա-իսրայելա-ֆրանկո-բրիտանական պատերազմի դրվագների քննության վրա՝ ուրվագծենք միայն այն հիմնական դասերը, որոնք այս պատերազմից քաղեցին բոլոր ներգրավված կողմերը:

Մեծ Բրիտանիայի համար՝ դա սեփական աշխարհաքաղաքական դերակատարման անկման գիտակցումն էր, ինչն ավելի մղեց նրան ԱՄՆ-ի հետ «հատուկ հարաբերությունների» կազմավորմանը: Ֆրանսիան և Իսրայելը, գիտակցելով իրենց սեփական աշխարհաքաղաքական խնդիրների լուծման նկատմամբ ԱՄՆ-ի այդ ժամանակվա իշխանությունների զգուշավորությունը, ձևակերպեցին սեփական ռազմամիջուկային ներուժի ստեղծման գերակայությունը: Սկսվեց ղը Գոլի և Ադենաուերի գլխավորած ֆրանկո-գերմանական սերտացումը:

ԽՍՀՄ-ը, ոգևորված իր ուլտիմատիվ քաղաքականության հաջողություններով, *գիտակցեց իրեն* իբրև գերտերություն [16]: ԱՄՆ-ը *դարձավ* գերտերություն՝ միևնույն ժամանակ գիտակցելով Մերձավոր Արևելքում իր այսպիսի ներգրավվածության ողջ վտանգը⁷ և ուրվագծելով տարածաշրջանում կոմունիստական էքսպանսիային հակադրվելու իր վճռականությունը՝ այսպես կոչված “Էյզենհաուերի դոկտրինի” շրջանակներում:

Վերջապես, մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից, 1956թ. պատերազմի անենակարևոր դասը հանդիսացավ Արևմտյան Եվրոպայի ներկրումային խոցելիության ու նավթաէներգետիկ գործոնի աշխարհաքաղաքական արդյունավետության գիտակցումն Արաբական Աշխարհում: Դա իր տրամաբանական դրսևորումը ստացավ 1960թ. Բաղդադյան հանդիպման ժամանակ, որի ընթացքում Իրանը, Իրաքը, Քուվեյթը, Ս. Արաբիան և Վենեսուելան պայմանավորվեցին ստեղծել նավթ արտահանող երկրների կազմակերպություն (ՆԱԵԿ): Հատկանշական էր նաև այն հանգամանքը, որ Իրաքը, լինելով արևմտամետ Բաղդադյան պայմանագրի անդամ, Սուեզի ճգնաժամի

⁷ Դեռևս 1956թ. սեպտեմբերի 2-ին ԱՄՆ նախագահ Դ. Էյզենհաուերը Մեծ Բրիտանիայի վարչապետ Է. Իդենին ուղղված իր նամակում, բացատրելով մոտալուտ պատերազմում ԱՄՆ-ի չեզոք դիրքի անհրաժեշտությունը, մասնավորապես նշում է. «Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի, իսկ որոշ իմաստով նաև ողջ Ասիայի ու Աֆրիկայի ժողովուրդներն համախմբվում են ընդդեմ Արևմուտքի այն աստիճան, որ կարծես թե դա չի հաղթահարվելու ոչ ներկայիս սերնդի կյանքի ընթացքում, ոչ էլ նույնիսկ այս ողջ դարաշրջանում՝ մասնավանդ եթե չմոռանանք ռուսների խառնակչություն սարքելու ունակությունները» [17]: Ավաղ, մարգարեական այս բառերն ըստ արժանվույն չգիտակցվեցին:

ժամանակ հայտարարեց պատերազմում Եգիպտոսին աջակցելու իր մտադրության մասին: Այսպիսով, հակահարայելական դիրքորոշումը և արաբական համերաշխությունը, խարսխված մահմեդական ընդհանրության վրա, հանդիսացան ավելի զորեղ գործոններ, քան տարածաշրջան ներմուծված գլոբալ հակամարտության հրամայականները:

3.2. Պարզունակ (1966-67թթ.) ու համակարգված (1971-74թթ.) արգելանքների փուլեր

1967թ. հունիսյան արաբա-իսրայելական 3-րդ պատերազմի ժամանակ ՆԱԵԿ արաբական երկրներն առաջին անգամ ԱՄՆ և ՄԲ նկատմամբ կիրառեցին նավթային արգելանքի մեխանիզմը: Այս քայլի արդյունավետության մասին, ի թիվս այլոց, վկայում է նաև այն զուսպ գնահատականը, որը բերվում է [18] աշխատությունում՝ Իսրայելի ագրեսիայի կանխման հարցում ԽՍՀՄ վճռորոշ դերի գնահատականների հետ մեկտեղ: Մեջ բերելով Գ. Ա. Նասերի խոսքերը ԽՍՀՄ դիրքորոշման վերաբերյալ⁸ հեղինակը շարունակում է. «Իսրայելի ագրեսիայի կասեցմանը նպաստեցին նաև այլ երկրներ: Այսպես, Քուվեյթը, Ս. Արաբիան, Ալժիրը և Իրանը դադարեցրին նավթի մատակարարումներն ԱՄՆ և ՄԲ, այսինքն այն երկրներին, որոնք չնայած չեզոքության մասին իրենց հայտարարություններին, աջակցում էին Իսրայելին» [18]:

Այս բնութագրական հակիրճությունը, մեր դիտարկումներով, պայմանավորված էր արդեն իսկ այդ ժամանակ ձևավորված գիտակցմամբ, որ ՄԱ տարածաշրջանի նավթ արդյունաբերող երկրները տիրապետել են աշխարհաքաղաքական հակազդման մի գործուն միջոցի, որը հակված են օգտագործել միանգամայն ինքնուրույն: Առավել ևս, որ մահմեդական աստվածաբանների կողմից 1962թ. Մեքքայում հիմնադրված Իսլամական աշխարհի լիգա (ԻԱԼ) կազմակերպությունում (որն արագորեն չափազանց ազդեցիկ դարձավ), հստակորեն ձևավորվեց Ս. Արաբիայի առաջատարությունը «տարածաշրջանում առաջադեմ ուժերի ազդեցությունը չեզոքացնելու» գործում: Ուժեր, «որոնք խմբավորված էին հիմնականում Գ. Ա. Նասերի շուրջ» [20, էջ 16]: Այդ ժամանակ հստակ ձևակերպվեցին նաև ԻԱԼ հակազդման թիրախները՝ համաշխարհային իմպերիալիզմ և նեո-գաղութատիրություն, կոմունիզմ և սիոնիզմ:

⁸ «ԽՍՀՄ-ը կատարեց իր բոլոր ռազմական, քաղաքական և տնտեսական պարտավորությունները, և առանց այս օգնության՝ մեր վիճակը չափազանց ծանր կլիներ... ԽՍՀՄ-ն իրոք միակ գերտերությունն է, որն ունակ է օգնել մեզ՝ հասնելու մեր նպատակներին...» [19]:

Հաջորդ փուլում (1971-74թթ.) և արաբա-իսրայելական 4-րդ պատերազմի ընթացքում (1973թ. հոկտեմբեր) նավթային արգելանքը կիրառվեց արդեն որակապես այլ մակարդակով: Նախ անմիջական ճնշումը (մատակարարումների ծավալների կրճատում) կիրառվեց ավելի նպատակասլաց և շրջանցեց Արևմուտքի չեզոք երկրները՝ հարվածելով առաջին հերթին ԱՄՆ-ին, ՄԲ-ին, Նիդերլանդներին և Պորտուգալիային: Այսպիսի մոտեցումը նպաստեց արևմտյան երկրների համերաշխության որոշակի ջլատմանը: Իսկ ամենաեական նորությունը նրանումն էր, որ այս քանակական ճնշմանը նախորդեց որակական հարված՝ արաբական պետությունների ճնշման տակ 1971թ.-ին նավթային տրանսնացիոնալ ընկերությունները ստիպված եղան բարձրացնել նավթի միջազգային գները: Արդյունքում, հիմնահատակ ցնցվեց ՏՀԶԿ երկրների ողջ ֆինանսատնտեսական համակարգը, իսկ ԱՄՆ-ը և ՄԲ-ն հայտնվեցին էներգետիկ սուր ճգնաժամի իրողությունում (տես Հավելված):

Պետք է շեշտել, որ չնայած մեծ դժվարություններին, որոնք առաջացան «էներգետիկ պատերազմի» այս մեխանիզմների կիրառումից, ՏՀԶԿ երկրները կարողացան դիմակայել դրանց: Տնտեսական և քաղաքական համակարգերի մեծ ճկունության շնորհիվ, էներգետիկ ճգնաժամը հիմնականում հաղթահարվեց: Ավելին, այսօրինակ հարվածների դեմ մշակվեց հակազդեցությունների համալիր և տարաբնույթ զինանոց: Այսպես, Սուեզյան ճգնաժամի ավարտից հետո, ՆԱԵԿ կազմավորմանը զուգընթաց, սկսվում են Արևմուտքի երկրների սեփական նավթագազային պաշարների ակտիվ հետախուզման ծավալումն աշխատանքները, իսկ 60-ականների կեսերից սկսվում է նրանց արդյունաբերումը: Նմանատիպ աշխատանքներ են ծավալվում նաև այլ տարածաշրջաններում (Լատինական Ամերիկա, Աֆրիկա, Ասիա) որոնք հետագայում պետք է թուլացնեին ՏՀԶԿ երկրների ներկրումային կախվածությունը Մերձավոր ու Միջին Արևելքի տարածաշրջաններից: 1961թ. հիմնադրվում է ՏՀԶԿ-ն, որպես յուրօրինակ հակակշիռ ՆԱԵԿ-ի ստեղծմանը, մշակվում, իսկ այնուհետև լայնորեն կիրառվում է տնտեսական ու տեխնոլոգիական պատժամիջոցների մեխանիզմը:

1971-74թթ. համակարգված ենթարգոյի հետևանքներին դիմակայելու համար, ԱՄՆ-ը և Արևմտյան Եվրոպան դիմում են էլ ավելի վճռական քայլերի: Այսպես, 1971թ. օգոստոսի 3-ին ԱՄՆ նախագահ Նիքսոնն իր հրամանագրով կանգնեցնում է դոլարը ոսկու համարժեքով փոխանակման բոլոր գործարքները, 90 օրով սառեցնում բոլոր գները և 10%-ով բարձրացնում ներկրվող ապրանքների մաքսային հարկումները: Նույն տարում Նիքսոնը հայտարարում է 1944թ.-ից գործող

միջազգային տարադրամների համաձայնեցված փոխարժեքի բրետոնվոլդայան համակարգից հրաժարվելու մասին և հռչակում է «Նոր տնտեսական քաղաքականություն»⁹: Ավելի ուշ, 1973թ. մարտին, 14 երկրների նախարարների Փարիզյան հանդիպման ժամանակ ընդունվում է միջազգային տարադրամների «լողացող փոխարժեքի» մասին պայմանագիրը: Իրականացվեցին զարգացած երկրների էներգետիկ ոլորտների խոր կառուցվածքային վերափոխումներ (տես Հավելվածում): Ընդհանրապես, 1971-74թթ. իրադարձությունները հանդիսացան այն բեկումնային կետը, որից ծայր են առնում այլ-ընտրանքային էներգետիկ տեխնոլոգիաների զարգացումը, էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ինտենսիվ մշակումը և զանգվածային կիրառումը, էներգետիկ ոլորտների ճկունության ու մրցունակության բարձրացումը և այլ կարևոր գործընթացներ: Նրանք պայմանավորեցին ՏՀԶԿ երկրների էներգետիկ ոլորտների զարգացման հիմնական միտումները XX դարի վերջին տասնամյակներում, միտումներ, որոնք ակտիվորեն գործում են մինչ օրս (տես սույն հոդվածի առաջին մասում):


Այլ խոսքերով, 70-ականների սկզբին գիտակցելով իրենց էներգետիկ ներկրումային խոցելիությունը, ՏՀԶԿ երկրները ձեռնամուխ եղան տնտեսաքաղաքական համալիր ռազմավարության մշակմանն ու իրագործմանը, որի նպատակն էր մեղմել էներգետիկ ներկրումային կախվածությունը, կանխել նավթաէներգետիկ գործոնի կիրառումը, հակազդել դրան, իսկ հետագայում այն օգտագործել նաև սեփական աշխարհաքաղաքական նպատակների իրագործման համար (տես ստորև 3.4, նաև [5, 6, 21]):

3.3. Սաուդյան Արաբիայի առաջատարության ձևավորումը

Արաբա-իսրայելական հակամարտության ընթացքում արաբական աշխարհում, առաջին հերթին Պարսից ծոցի երկրներում, գիտակցվեց նավթաէներգետիկ գործոնն իրենց համար նպաստավոր աշխարհաքաղաքական համատեքստում արդյունավետորեն օգտագործելու հնարավորությունը: Այս գիտակցումը նպաստեց արաբական, և ավելի լայն՝ մահմեդական երկրների քաղաքական, գաղափարախոսական և տնտեսական համախմբմանը, իսկ Ս. Արաբիային հնարավորություն ընձեռնեց ստանձնելու այս համախմբման առաջատարի և «քարշող ուժի» դերը:

⁹ 1971-74թթ. ծանր ֆինանսատնտեսական իրավիճակն ԱՄՆ-ում (1971թ. արձանագրվեց 1894թ.-ից ի վեր առաջին առևտրային դեֆիցիտը) հասկանալիորեն պայմանավորվում էր նաև Վիետնամական պատերազմով: Ընդհանրապես, այս զուգորդումը՝ «էներգետիկ» հարված գերտերությանը, որը վարում է լայնածավալ լոկալ պատերազմ, հատկանշական է (տես ստորև, 3.4):

Նման իրադրությունը առաջին հերթին պայմանավորված է Ս. Արաբիայի՝ տարածաշրջանում հում նավթի արդյունահանման ծավալների առումով որոշիչ դերով: Իրոք, ինչպես արդեն նշել էինք սույն հոդվածի 2-րդ մասում, մինչև 1991թ. Պարսից ծոցի պատերազմն այս երկրում հում նավթի արդյունահանման տատանումները որոշիչ կերպով բնութագրում էին ողջ տարածաշրջանի գումարային ցուցանիշների փոփոխությունները (տես նկ. 6.ա): Ավելին, ինչպես հետևում է նկ. 9-ից, որտեղ նորից պատկերել ենք ՄԱ տարածաշրջանում հում նավթի գումարային արդյունահանման կորը (ձախ առանցք, համաձայն [1]-ի), 1975թ. մարտի 25-ին Ֆեյսալ թագավորի սպանությունը Ս. Արաբիայում և երկրում ներքաղաքական լարվածությունը հանգեցրին նավթի տարածաշրջանային գումարային արդյունահանման նկատելի անկման: Մինչդեռ անգամ 1971-74թթ. նավթային արժեթղանքները այս ցուցանիշի որևէ նկատելի փոփոխություն չառաջացրին: Մյուս կարևոր հանգամանքը նրանում էր, որ լինելով սուննի մահմեդական աշխարհի հոգևոր կարևորագույն կենտրոնը, Ս. Արաբիան պատկառելի դեր ստանձնեց այնպիսի կազմակերպություններում, ինչպիսիք են Արաբական երկրների Լիգան (ԱԵԼ) ու Համաշխարհային իսլամական կոնգրեսը (ՀԻԿ) և որոշիչ դեր արդեն հիշատակված ԻԱԼ-ում ու Իսլամական կոնֆերանս կազմակերպությունում (ԻԿԿ)¹⁰: Այս դերա-



¹⁰ ԱԵԼ-ը ստեղծվել է 1949թ, ՀԻԿ-ը՝ 1926թ (նորագույն պատմության իսլամական հնագույն կազմակերպությունը), ԻԿԿ-ը՝ 1969թ:

կատարումը խարսխված էր ընդդեմ «սիոնիզմի, իմպերիալիզմի և կոմունիզմի» մահմեդական աշխարհի Ջիհադի հայտարարման և իրականացման կոչերի վրա: Համաձայն [20, էջ 105]-ի, «Ջիհադի կոչերն լայն արձագանք գտան աֆրո-ասիական երկրների հատկապես իսլամիստական և ծախս-արմատական շրջանակներում: Դրան մեծապես նպաստեցին նաև 1973թ.-ին Ս. Արաբիայի նավթային պատժամիջոցների կիրառումն Իսրայելին աջակցող երկրների նկատմամբ: ԻԱԼ-ի մամուլը, բազմակողմանիորեն քննելով նավթի արտահանումների օգտագործումը իբրև քաղաքական ճնշման միջոց, նույնացնում էր այս քայլի արդյունավետությունը Ջիհադում հաղթանակ տոնելու հնարավորության հետ»:

3.4. Գլոբալացման փուլ (1980թ.-ից մինչ օրս)

«Էներգետիկ շանտաժի» քաղաքականության հաջորդ՝ գլոբալացման փուլի հատկանշական գծերից մեկը, մեր դիտարկումներով, հանդիսացավ ՏՀԶԿ երկրների, առաջին հերթին ԱՄՆ-ի կողմից, այս քաղաքականության շրջումն ընդդեմ 3-րդ աշխարհի նավթ արդյունահանող որոշ երկրների: Որպես միայն մեկ հատկանշական օրինակ, բերենք 1982թ. մարտի 10-ին արդեն ԱՄՆ կողմից հայտարարված արգելանքը Լիբիայից նավթի արտահանումների վրա: Ընդ որում, այս քայլը զուգորդվեց Լիբիա բարձր տեխնոլոգիաների ներկրման արգելքով: Այսպիսով, ՏՀԶԿ երկրների կողմից անմիջական արգելանքի մեխանիզմը հարստացվեց տնտեսական ու տեխնոլոգիական պատժամիջոցների համակարգված օգտագործումով:

Սակայն, գլոբալացման փուլի ամենակարևոր առանձնահատկությունը այս քաղաքականության մեթոդների օգտագործումն էր ԽՍՀՄ-ԱՄՆ հակամարտության շրջանակներում: Բանն այն է, որ 1971-74թթ. էներգետիկ ճգնաժամն ու «նավթաէներգետիկ» պատերազմի հետևանքները գրեթե չազդեցին ԽՍՀՄ և սոցիալիստական դաշինքի երկրների վրա: Անմիջական պատճառն այստեղ ԽՍՀՄ-ի՝ էներգակիրներ՝ նավթ ու բնական գազ արտահանող խոշոր երկիր լինելու իրողությունն էր: Սակայն ավելի կարևոր էր այն հանգամանքը, որ սոցիալիստական դաշինքի ֆինանսատնտեսական համակարգը 70-ականների սկզբին հանդիսանում էր այսպես ասած «իր, ինքն իր մեջ», գործում էր հիմնականում մեկուսացված և ենթակա էր արտաքին ազդեցություններին միայն նվազագույն չափով: Ու թեև 1971-74թթ. այս մեկուսացվածությունը ԽՍՀՄ-ը զերծ պահեց ցնցումներից, այն նաև կանխեց երկրի էներգետիկ ոլորտում, և ավելի լայն՝ տնտեսական համակարգում կառուցվածքային խոր վերափոխումների իրականացման անհրաժեշտության գիտակցումը: Գիտակցում, որը ՏՀԶԿ երկրներ-

րում ապահովեց էներգետիկ ճգնաժամի հաղթահարումը և նպաստեց տեխնոլոգիական առաջընթացին:

Դեռ ավելի քան մեկ տասնամյակ ԽՍՀՄ էներգետիկ ոլորտը և ողջ տնտեսական համակարգը շարունակեց մնալ կարծր, անարդյունավետ, էներգա- և ռեսուրսատար, զերծ էներգախնայողության, մրցունակության և արդյունավետության խթանման որևէ գործուն լծակներից: Խորացավ քաղաքական ճահճացումը և տեխնոլոգիական հետամնացությունը հատկապես էլեկտրոնիկայի, կապի, համակարգչային տեխնիկայի և նյութագիտության ոլորտներում: Համաձայն ՄՍԱՀՀ¹¹ տարեկան տեղեկատուի, ԽՍՀՄ-ը 1973թ.-ին արդյունաբերական ապրանքների արտահանումներով գրանցված իր 11-րդ տեղից ետընթաց ապրեց և 1985թ.-ին գրավեց արդեն 15-րդ տեղը՝ զիջելով Տայվանին, Հարավային Կորեային, Հոնկոնգին և Շվեյցարիային: 80-ականների սկզբին սրվեց տնտեսական համակարգի կախվածությունն էներգակիրների արտահանումից գոյացած տարադրամային միջոցներից, որոնք ԽՍՀՄ-ը ստիպված էր ծախսել հացահատիկի, պարենի ու զանգվածային սպառման ապրանքների և նրանց արտադրության տեխնոլոգիաների ծավալուն գնումների վրա: Այսպիսով, 80-ականների սկզբին ԽՍՀՄ-ը դարձավ խոցելի համակարգված էներգետիկ-տեխնոլոգիական հարվածի համար:

Առաջին այդպիսի հարվածը ԽՍՀՄ-ին հասցվեց նույն 1982թ. օգոստոսի 12-ին, երբ ԱՄՆ արգելեց իր տեխնոլոգիաների օգտագործումն Սիբիր-Արևմտյան Եվրոպա գազամուղի շինարարության համար¹²: Սակայն, գլոբալացման փուլի իրողությունների ամենավառ դրսևորումը հանդիսացավ 1985-86թթ. հում նավթի միջազգային գների կտրուկ անկումը, որը համաձայն [1]-ի, կազմեց ավելի քան 40%¹³: Այս անկումը հստակորեն կարելի է տեսնել նկ. 9-ում, որտեղ հենվելով [1]-ի վրա, լրացուցիչ առանցքում պատկերել ենք հում նավթի միջազգային գների միջին տարեկան ցուցանիշի տատանումը համեմատ 1980թ. ցուցանիշի՝ ընդունված իբրև 100%: Համաձայն որոշ վերլուծաբանների, այս գործընթացը ԽՍՀՄ-ի դեմ ուղղված ԱՄՆ-Ս.Արաբիա ռազմավարական համագործակցության արդյունքն էր [22]: Ավելին, համաձայն նույն աղբյուրի, հենց այդ ժամանակ աֆղան մուջահիդներին օժանդակելու հողի վրա ձևավորվեց ԱՄՆ նախագահ Ռ. Ռեյգանի վարչախմբի և

¹¹ Մաքսային սակագների և առևտրի հանընդհանուր համաձայնագիր:


¹² Այս որոշման դեմ իր բողոքը հայտնեց Եվրոպայի տնտեսական խորհուրդը, ինչը միանշանակ բխում էր ԽՍՀՄ-ից արտահանվող էներգակիրներից, առաջին հերթին՝ բնական գազից, Արևմտյան Եվրոպայի՝ առաջին հերթին Գերմանիայի, էական ներկրումային կախվածությունից:

¹³ Համաձայն [4]-ի, այս անկումն, իրական գներով արտահայտված, ավելի խորն էր և կազմում էր մոտ 60%:

սառույցան արքայական տան միջև սերտ համագործակցությունը: Այդ ժամանակ խաչաձևվեց նաև Բուշ ընտանիքի գործունեությունը Ուսամա բեն Լադենի ընտանիքի հետ: «Սառույցան արքայական տունն ապացուցեց իր վարպետությունը նավթային գործոնը որպես քաղաքական զենք կիրառելու մեջ: Փաստորեն, այն կիրառվեց երկու անգամ՝ նախ ԱՄՆ-ի, իսկ հետո ԽՍՀՄ-ի հանդեպ ... Ներկայումս այն արտացոլվում է Իսրայելում պաղեստինյան ինտիֆադային և Ռուսաստանում չեչե-նական ջիհադին աջակցման մեջ» [22, էջ 62]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԽՍՀՄ էներգակիրների արտահանման հաշվեկշռում նավթը հանդիսանում էր զգալի, բայց ոչ միակ բաղադրիչը, իսկ ներքին սպառման առումով նա 1984թ.-ից ի վեր արդեն զիջում էր բնական գազին (տես նկ. 8.ա և բ), ԱՄՆ–Ս. Արաբիա նավթային ռազմավարական համագործակցության մասին վերը նշված փաստարկը կարելի էր միակողմանի համարել: Այս հարցի պարզաբանման համար, հենվելով [1]-ի վրա, նկ. 10.ա-ում պատկերել ենք ԽՍՀՄ/ԱՊՀ-ից էներգակիրների արտահանումներում նավթի և բնական գազի համամասնությունը 1980-98թթ. համար: Ինչպես հետևում է այս նկարից, բնական գազը 1985-87թթ. կազմել էր արտահանումների ընդհանուր ծավալների (տ.ն.հ.) մոտ 25%-ը և ներքին սպառման ավելի քան 50%-ը (տես նկ. 8.բ.): Հատկանշականորեն, այս նույն ժամանակահատվածում դիտարկվում է նաև բնական գազի միջազգային գների կտրուկ անկում: Այս անկումը կարելի է տեսնել նկ. 10.բ-ում, որտեղ հենվելով [9] աղբյուրի վրա, պատկերված են ճապոնիա և ԱՄՆ բնական գազի ներկրումային գների տատանումները \$/ԲՁՄ (բրիտանական ջերմային միավոր) չափողականությամբ:

Մենք հեռու ենք այն տեսակետից, որ ԽՍՀՄ փլուզումը որոշիչ կերպով պայմանավորված էր 1985-87թթ. «էներգետիկ» հարվածով, կամ նույնիսկ որևէ արտաքին գումարային ազդեցությամբ («Աստղային պատերազմների» տեխնոլոգիական նոր մրցակցության հեռանկար, Արևելյան եվրոպայում ազատական շարժում և այլն): Մեր կարծիքով, վճռորոշն այստեղ ներքին սոցիալ-քաղաքական և տնտեսական գործոններն էին և այն հանգամանքը, որ ի տարբերություն ՏՀՁԿ երկրների, ԽՍՀՄ կարծր համակարգը չկարողացավ բավարար ճկունությամբ ընդունել նոր մարտահրավերները և դիմակայել դրանց: Սակայն, բոլոր դեպքերում, այս գործընթացն անհրաժեշտ է դիտարկել ԽՍՀՄ նկատմամբ ԱՄՆ նախագահ Ռ. Ռեյգանի վարչախմբի կողմից իրականացված աննախադեպ համալիր ճնշման համատեքստում: Վերջապես, հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ճիշտ այնպես, ինչպես 1971-73թթ. «նավթաէներգետիկ» հարվածն ԱՄՆ-ին հասցվեց Վիետնամական պատերազմի ավարտական



փուլում, 1985-87թթ. հարվածը ԽՍՀՄ-ին հասցվեց Աֆղանական պատերազմի ավարտին, երբ երկրի քաղաքական ու տնտեսական համակարգերը գտնվում էին գերլարված վիճակում և, հետևաբար, առավել խոցելի էին:

Վերջացնելով գլոբալացման փուլի հատկանշական գծերի այս համառոտ քննությունը, անհրաժեշտ է նշել նաև այս փուլի այլ բնութագրական գծեր. «Էներգետիկ շանտաժի» քաղաքականության տարրերի օգտագործումը Ռուսաստանի Դաշնության կողմից նախկին ԽՍՀՄ հանրապետություններն իր աշխարհաքաղաքական ուղեծրում պահելու ուղղությամբ, ետխորհրդային տարածքում «Էներգետիկ շանտաժի» կիրառումը տարածաշրջանային հակամարտություններում և այլն: Այս երևույթների վերլուծությունը, սակայն, առանձին ուսումնասիրության խնդիր է:

4. Վերջաբանի փոխարեն

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունները, կարող ենք եզրակացնել, որ էներգետիկ գործոնն իրապես միահյուսված է աշխարհաքաղաքականության հետ և վերջինս ձևագոյացնող բաղադրիչներից ու գործուն լծակներից մեկն է: Նրանք գործուն են ձեռք-ձեռքի ամենուրեք, նրանք խաչաձևվում են նաև Անդրկովկասում ու Հայաստանում: Սակայն, նրանց նույնացումը (միտում որն առկա է հայրենական և ԱՊՀ մի շարք վերլուծաբանների մոտ) պետք է համարել միակողմանի, որոշ դեպքերում՝ նույնիսկ ապակողմնորոշող և, հետևաբար, վտանգավոր:

Փորձենք հիմնավորել այս դրույթը մեր տարածաշրջանում գործող

երկու հիմնական աշխարհաքաղաքական վեկտորներում էներգետիկա /աշխարհաքաղաքականության համասանության ուրվագծումով:

* * *

Արդի ետելցիոյան Ռուսաստանի Դաշնության աշխարհաքաղաքական ընդհանուր միտումը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. *վերագտնել սեփական ռազմավարական դերն ԱՊՀ-Եվրոպա-Եվրասիա-Աշխարհ ընդլայնվող աշխարհագրական և քաղաքական սանդղակում, միևնույն ժամանակ չվտանգելով ներքին սոցիալ-քաղաքական կայունությունը և երաշխավորելով սեփական տնտեսական համակարգի առաջընթաց զարգացումը*: Հենվելով վերը կատարված դիտարկումների վրա, կարելի է հստակորեն առանձնացնել այս ծավալուն, բարդ և բազմափուլ խնդրի մեջ էներգետիկ գործոնի դերը: Այս իմաստով չափազանց հուշագրավ է ս.թ. սեպտեմբերի 2-ին կայացած ՌԴ նախագահ Վ. Պուտինի և Ս. Արաբիայի թագաժառանգ Աբդուլահ իբն Աբդուլ Ազիզի հանդիպումը Մոսկվայում, ինչպես նաև ՌԴ վարչապետ Մ. Կասյանովի հետ հաջորդ օրը կայացած նրա հանդիպումը, որին, ի թիվս այլոց, մասնակցում էին նաև Ե. Պրիմակովը և Ա. Կադիրովը:

Հաշվի առնելով վերը շարադրված «էներգետիկ պատերազմների» գլոբալացման փուլի իրողությունները, բնական է ենթադրել, որ այս աննախադեպ հանդիպման էական, բայց ոչ միակ, խնդիրը հանդիսացել է ՌԴ նկատմամբ 1985-87թթ. օրինակով «էներգետիկ հարվածի» բացառման երաշխավորումը, ՌԴ տնտեսական համակարգի, առաջին հերթին՝ նրա նավթային ոլորտի զարգացման օժանդակումը՝ ՀՆԱ-ի կրկնապատկման Պուտինյան հավակնոտ ծրագրի համատեքստում, և ՌԴ տնտեսության՝ նավթի միջազգային գների տատանումներից վտանգավոր կախվածության հնարավորինս մեղմումը: Այս ենթադրությունը միանգամայն համահունչ է հանդիպման արդյունքների մասին պաշտոնական հայտարարությանը, համաձայն որի, Մոսկովյան հանդիպման ընթացքում ձեռք են բերվել նավթի միջազգային գների ձևավորման հարցում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին պայմանավորվածություններ: Եվ, միանգամայն կանխատեսելիորեն, այս քաղաքականության առաջին արդյունքն արձանագրվեց հանդիպումից 22 օր անց, երբ ՆԱԵԿ երկրների ս.թ. սեպտեմբերյան հանդիպման ժամանակ հայտարարվեց նավթի արդյունահանման քվոտաների նվազեցման մասին: Այսպիսի նվազեցումն ամրապնդում է նավթի ներկայիս բարձր գների տիրույթը և լրացուցիչ երաշխիքներ է ստեղծում ոչ ՆԱԵԿ երկրների՝ առաջին հերթին ՌԴ (նաև Մեքսիկայի ու

Օճանի) նավթային արտահանումների սպառման համար¹⁴:

Կարծում ենք, որ առկա են բոլոր հիմքերը ենթադրելու, որ ռուսաստանյան հանդիպման օրակարգում, զուտ նավթաէներգետիկ խնդիրներից զատ (որոնք ունեին նաև աշխարհաքաղաքական երանգ), իրենց տեղն ունեին նաև այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են Չեչնիայում և ՌԴ հարավում քաղաքական կայունության հաստատումը, ՌԴ հասարակության մահմեդական բաղադրիչի լիարժեք ինտեգրումը և ՄԱ տարածաշրջանում ու, առաջին հերթին, արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման մեջ ՌԴ դերակատարման վերախմաստավորումը: Հարցեր, որոնք ունենալով նաև էներգետիկ երանգ, առավելապես պատկանում են զուտ աշխարհաքաղաքական դաշտին:

Հենց այս, զուտ աշխարհաքաղաքական համատեքստում է անհրաժեշտ դիտարկել նաև ՌԴ նախագահ Պուտինի վերջերս Մալազիայում կատարած հայտարարությունը Ռուսաստանի ԻԿԿ անդամության նպատակահարմարության մասին, և նույնիսկ այնպիսի «զուտ էներգետիկ» գործընթացներ, ինչպիսիք են ռուսական «Յուկոս» և «Սիբնեֆտ» ընկերությունների միաձուլումը և այդ միաձուլումից ամերիկյան ընկերությունների դուրս մղումը կամ Անդրկովկասի էներգետիկ շուկաների «զավթումը» ռուսական ընկերությունների կողմից: Այսպիսով, վերը ձևակերպված ՌԴ աշխարհաքաղաքական առաքելության լույսի ներքո, ռուս-սաուդյան հարաբերությունների արդի սերտացումը և այլ հարակից գործընթացները անհրաժեշտ է գնահատել իբրև վերջին տարիների ռուսական դիվանագիտության և աշխարհաքաղաքականության ամենաէական նվաճումներ¹⁵:

* * *

ՏՀԶԿ և ԱՄՆ աշխարհաքաղաքականության էներգետիկ բաղադրիչը թերևս առավել հստակ ձևակերպված է հենց այս երկրների էներգետիկ կառույցների փորձագետների կողմից [9]: «ՄԷԳ և ԵԷԽ երկրները գիտակցում են էներգետիկ անվտանգության հիմնախնդրի կարևորությունը, և էներգակիրների մատակարարումների ուղիների բազմազանեցումը դիտարկում են իբրև այդ հիմնախնդրի լուծման

¹⁴ Ուստի զարմանալի է ՌԴ, ԱՊՀ և միջազգային որոշ վերլուծաբանների զարմանքը, արտահայտված «այս անակնկալ որոշման» կապակցությամբ [23]:

¹⁵ Մեր գնահատումներով, հայրենական որոշ վերլուծաբանների այն կարծիքը, թե «կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ թագաժառանգ Աբդալլահի այցը Մոսկվա համաձայնեցված է եղել ամերիկացիների հետ» և հանդիսանում է ԱՄՆ «ֆունկցիոնալ տարանջատման» նոր արտաքին քաղաքականության արգասիքը [24], պետք է համարել ոչ համարժեք: Հակառակը, կարծում ենք, որ այս այցը պետք է դիտարկել որպես սեփական աշխարհաքաղաքականության և աշխարհի միաբնեռայնության դեմ ՌԴ դիրքորոշման էական ու միանգամայն ինքնուրույն հաղթանակ:

եական բաղադրիչ: Այս իմաստով, մի շարք տարածաշրջաններ կարող են հանդիսանալ Միջին Արևելքից նավթի մատակարարումների այլընտրանք: Դրանք են Աֆրիկան, Լատինական Ամերիկան և Մեքսիկան, Զյուսիսային ծովի և նախկին ԽՍՀՄ տարածքները: Չնայած որ ներկայումս այս տարածաշրջաններից մատակարարումները մեծ չեն, սակայն ընդհանուր մատակարարումների խաթարման դեպքում, բոլոր այս տարածաշրջանները (հավանաբար բացի նախկին ԽՍՀՄ-ից)¹⁶ կարող են արագորեն ընդլայնել նավթահանումների ծավալները¹⁷:

Յետաքրքրական է համեմատել այս ձևակերպումը՝ նրա աշխարհաքաղաքական հետևանքներով, վերջերս հայկական մամուլում բերված [25] իրանցի հայտնի փորձագետ Մ. Դեհքանի գնահատականների հետ, համաձայն որի՝ Մերձավոր Արևելքում ԱՄՆ քաղաքականության հիմնական *աշխարհաքաղաքական* խնդիրներն են՝ Ա. կարճաժամկետ հեռանկարում Իրաքի գրավումը, վարչակազմի փոփոխությունը և իրաքյան նավթի վրա վերահսկողության հաստատումը; Բ. միջնաժամկետ հեռանկարում Մերձավոր Արևելքում իրականացնել աշխարհաքաղաքական փոփոխություններ; Գ. երկարաժամկետ հեռանկարում վերահսկողություն սահմանել աշխարհի էներգատարողունակ շրջանների նկատմամբ՝ տնտեսական առավելություններ ստանալ Եվրամիության, Չինաստանի և ճապոնիայի նկատմամբ:

Հաշվի առնելով ԵՄ, ԽՕ ՏՀԶԿ և Ասիական տարածաշրջանների երկրների ՄԱ նավթից առնվազն նույնքան սուր կախվածությունը, ինչպիսին ԱՄՆ-ինն է, ավելի բնական և տրամաբանական կլիներ վերագրել այս խնդիրները ողջ ՏՀԶԿ և Ասիական տարածաշրջաններին: Սակայն, դառնալով համընդգրկուն, նպատակների այսպիսի ձևակերպումը զրկվում է *կիրառական*, և հետևաբար, *աշխարհաքաղաքական* որևէ նշանակությունից: Ջանալով մնալ ռացիոնալ բանականության դաշտում, այս նպատակները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

Պարսից ծոցի նավթի մատակարարումներից կախվածության թուլացում. դա նշանակում է՝ Ա. տարածաշրջանում արաբա-իսրայելական հակամարտության կարգավորում, Բ. Իրաքի վերահսկում որպես ներտարածաշրջանային այլընտրանք Ս. Արաբիային, այդ վերահսկմանը ներկրումային կախյալ այլ տարածաշրջանների ներգրավում (ԵՄ, ԿԱԵՎ, ԽՕ ՏՀԶԿ), Գ. Իրաքի վրա իրանական և սաուդյան

¹⁶ Նախկին ԽՍՀՄ/ԱՊՀ տարածաշրջանում նավթի արդյունահանման աճի նկատմամբ այս զգուշավորության հիմքերի մասին տես սույն հոդվածի մաս 2.4-ում:

¹⁷ Միջազգային էներգետիկ գործակալություն, հիմնադրված է 1974թ նոյեմբերին: Եվրոպական էներգետիկ խարտիա:

արմատական շրջանակների ներգործության թուլացում, Դ. զգոնություն տարածաշրջանում ՌԴ և Չինաստանի դերակատարման նկատմամբ: Տարածաշրջանից դուրս՝ դա նշանակում է ներկրումային ուղիների բազմազանեցում՝ աշխարհաքաղաքական իր բոլոր հետևանքներով:

Ամենայն ուշադրությամբ վերաբերվելով Իրաքի ետպատերազմյան կարգավորման հարցում ԱՄՆ-ԵՄ մոտեցումների տարբերություններին և նույնիսկ աշխարհաքաղաքական ընկալումներում որոշակի հակասություններին [27], կարծում ենք սակայն, որ եվրո-ամերիկյան միասնականության ջլատման միտումները իրենց նշանակությամբ և խորությամբ կզիջեն համախմբման միտումներին, իրադրության որևէ սրման կամ հավասարակշռության նկատելի խախտման դեպքում:

* * *

Գտնվելով ԽՍՀՄ կազմում, առաջնային էներգակիրների կենտրոնացված, երաշխավորված և ոչ շուկայական մատակարարումների իրողությունում, Հայաստանը զերծ մնաց 1971-73թթ. էներգետիկ ճգնաժամի հարվածներից: Ավելին, հանրապետության տնտեսական ինտենսիվ զարգացումը, հատկապես 1975-1990թթ., հանգեցրեց ներկրվող էներգակիրներից ողջ տնտեսական համակարգի էական կախվածությանը: Այսպես, էներգետիկ ներկրումային կախվածությունը 1985-91թթ. Հայաստանի համար կազմել էր 90-98%, իսկ սպառված էլեկտրաէներգիայի արտադրության առումով՝ 85-90% [28]: Շարժիչային վառելիքի առումով՝ Հայաստանը գտնվում էր, և գտնվում է բացարձակ ներկրումային կախվածության մեջ: Այս ծայրահեղ խոցելի վիճակը Հայաստանը ցավագին գիտակցեց միայն 20 տարի անց՝ 90-ականների սկզբին՝ ԽՍՀՄ փլուզումից և տարածաշրջանում նոր աշխարհաքաղաքական իրողությունների հաստատումից հետո:

Էներգետիկ ճգնաժամը հաղթահարած Հայաստանի համար կենսականորեն անհրաժեշտ է, որ այս գիտակցումը վերածվի համալիր ու երկարաժամկետ ռազմավարության:

Հեղինակը իր շնորհակալությունն է հայտնում Յուրի Մինասյանին (ՀՀ էներգետիկայի ինստիտուտ), Ալեքսանդր Առաքելովին (ՌԴ, Կուբան-էներգո) և Ռոբերտ Խառազյանին (ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողով)՝ խթանիչ քննարկումների համար: Հատուկ շնորհակալություն «Նորավանք» ԳԿՀ-ին՝ սույն հոդվածի պատրաստմանը օժանդակելու համար:

Աղբյուրներ և գրականություն

1. Annual Energy Review 2000. EC Directorate-General for Energy and Transport, 2001.
2. World Energy Statistics. International Energy Agency, 2002.
3. Energy in Europe. Annual Energy Review 1996. EC DG XVII. Special Issue, September 1996.
4. Energy in Europe. Annual Energy Review 1993. EC DG XVII. Special Issue, June 1994.
5. Economical Development: Special Issue. Scientific American, September 1980.
6. Energy for Planet Earth: Special Issue. Scientific American, September 1990.
7. Волков. Залейся!. Итоги, 29 июля, 2003. No. 30, с. 29-31.
8. Гухун Квон. Опасная уязвимость. *Эксперт*, 1 сентября, 2003. No. 32, с. 32-36.
9. Caspian Oil and Gas. The Supply Potential of Central Asia and Transcaucasia. International Energy Agency / The Energy Charter Secretariat, 1998.
10. Black Sea Energy Survey. International Energy Agency / OECD, 2000.
11. British Petroleum Statistical Review of World Energy, 2003.
12. С. Хантингтон. Столкновение цивилизаций. Аст, М., 2003.
13. Ա. Մարջանյան, «Բալխստիկ հրթիռային զենքը մեր տարածաշրջանում. Արդի վիճակը և տարածման դինամիկան», *Դրոշակ*, Աթենք, No. 11, հունիս 1998. Մաս Բ. Երևույթի ակունքները և զարգացման միտումները: ՅԷ-Կլոր Սեղանի նյութեր. Երևան, դեկտեմբեր 2000թ:
14. Н. Уильямс, Полная хронология XX века. “Вече-АСТ”, М., 1999.
15. Г. Киссинджер. Дипломатия. М., “Ладомир”, 1997. с. 471.
16. С. Хрущев. Рождение Сверхдержавы. Книга об отце. “Время”, М., 2000.
17. D. Eisenhower. Waging Peace: The White House Years 1956-61. Garden City, N.-Y.: Doubleday, 1965, p. 667.
18. Локальные войны: история и современность. Под ред. генерала армии И. Е. Шаврова. Изд. Мин. обороны, М., 1981. с. 139.
19. США. Экономика, политика, идеология. 1974, No. 2, с. 36.
20. Р. М. Шарипова. Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира. “Наука”, М., 1986. с. 105.
21. Ա. Մարջանյան, Վերականգնվող էներգետիկայի զարգացման հեռա - նկարները Հայաստանում. «Հայաստանի էներգետիկ Ապագան» Կլոր սեղանի նյութեր, Երևան, ապրիլի 17, 2001թ:
22. Ш. Мамаев. Всем известные засекреченные страницы. *Эксперт*, 11 августа, 2003, No. 29.
23. CNN. Business News Live 07.10.03; *Эксперт*, 5 октября, 2003, No. 36, с. 5.
24. Դ. Հովհաննիսյան. ԱՄՆ դիվանագիտական նոր հարաբերությունները. Ռուսաստանական հարաբերություններ: *Հանրապետական*, 2003, թիվ 6, էջ 8-10:

25. Ս. Հարությունյան. Իրանը իրաքյան խնդրում: *Հանրապետական*, 2003, թիվ 3, էջ 35:
26. *“Красная Звезда”*, 1978, 11 марта.
27. Գ. Տեր-Հարությունյան. Եվրակայությունը և միասնական Արևմուտքի հնարավոր պառակտումը: *Հանրապետական*, 2003, թիվ 5, էջ 17-22:
28. А. Марджанян. Хребет национальной безопасности. *Республика Армения*, No. 25, 2-го апреля 2003. Энергетическая безопасность - хребет национальной безопасности. *Ноев ковчег*, No. 61, апрель 2003.

ՀԱՎԵԼՎԱԾ

Մերձավոր ու Միջին Արևելք. ընտրյալ դրվագների ժամանակագրություն¹⁸

1956թ. Սուեզյան ճգնաժամ և Արաբա-իսրայելական 2-րդ պատերազմ

Հունվարի 5-ին կայանում է գնդապետ Գ. Ա. Նասերի և մարշալ Ի. Բ. Տիտոյի հանդիպումը Եգիպտոսում: Փետրվարի 1-ին ԱՄՆ նախագահ Դ. Էյզենհաուերը և ՄԲ վարչապետ Է. Իդենը ստորագրում են Վաշինգտոնյան հռչակագիրը՝ Մերձավոր Արևելքում համակարգված քաղաքականություն վարելու մասին: Փետրվարի 12-ին ԽՍՀՄ-ը հայտարարում է, որ ամերիկյան կամ բրիտանական զորքերի ուղարկումը Մերձավոր Արևելք կհանդիսանա ՄԱԿ-ի կանոնադրության ոտնահարում: Ապրիլի 21-ին Ջիդդայում (Ս. Արաբիա) կնքվում է ռազմական համագործակցության մասին պայմանագիր Ս. Արաբիայի, Եգիպտոսի և Եմենի միջև: Հունիսի 4-ին Գ. Ա. Նասերը հայտարարում է, որ պայմանագրային ժամանակի ավարտից հետո չի երկարացվի «Սուեզի Ջրանցք» ընկերության գործունեությունը: Հունիսի 24-ին գնդապետ Նասերը ընտրվում է Եգիպտոսի նախագահ: Հուլիսի 19-ին ԱՄՆ և ՄԲ հայտնում են Ասուանի հիդրոհանգույցի ֆինանսատեխնիկական աջակցությունից հրաժարվելու մասին: Հուլիսի 26-ին Գ. Ա. Նասերը հայտարարում է «Սուեզի Ջրանցք» ընկերության ազգայնացումը, իսկ հուլիսի 31-ին իր հրամանագրով լուծարում այն: Օգոստոսի 16-ին Լոնդոնում 22 երկրների ներկայացուցիչների խորհրդակցությունը հավանություն է տալիս Սուեզի ջրանցքը ՄԱԿ-ի վերահսկողությանը հանձնելու Դյուլի ծրագրին, ծրագիրը մերժվում է Եգիպտոսի կողմից սեպտեմբերի 9-ին: Սեպտեմբերի 30-ին ընթանում են Սեն-ժերմենյան գաղտնի ֆրանկո-իսրայելյան բանակցությունները՝ հակա-Եգիպտոսյան համաձայնեցված քաղաքականության մասին: Հոկտեմբերի 21-ին գաղտնի բանակցություններին միանում է ՄԲ (Սևրյան բանակցություններ): Հոկտեմբերի 25-ին ստեղծվում է Եգիպտա-Հորդանանա-Սիրիական ռազմական ուժերի միավորված հրամանատարություն: Հոկտեմբերի 29-ին իսրայելական բանակը ներ-

¹⁸ Ըստ [14]-ի: Լրացուցիչ հղումները նշվում են հատուկ:

խուժում է Սինայան թերակղզի: Նոյեմբերի 1-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասանբլեան դատապարտում է իսրայելա-ֆրանկո-բրիտանական ագրեսիան և կոչ է անում դադարեցնել կրակը: Սառը պատերազմի ողջ ընթացքում առաջին և վերջին անգամ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը քվեարկում են համաձայնեցված: Նոյեմբերի 2-ին ԽՍՀՄ-ն օգտագործում է իր վետոյի իրավունքը Յունգարիայում կրիտիկական իրավիճակի քննարկումները կասեցնելու համար: Նոյեմբերի 5-ին բրիտանական դեսանտ է իջեցվում Պորտ Սաիդում՝ Սուեզի ջրանցքի հյուսիսային դարբասներում, նույն օրը ԽՍՀՄ-ը բողոքի նոտա է ներկայացնում Իսրայելին, Ֆրանսիային և ՄԲ-ին [16, 18]: Նոյեմբերի 6-ին ԱՄՆ նախագահի պաշտոնում վերընտրվում է Դ. Էյզենհաուերը: Նոյեմբերի 15-ին Եգիպտոս են ժամանում ՄԱԿ-ի խաղաղարար ուժերը: Դեկտեմբերի 5-ին սկսվում է ֆրանկո-բրիտանական ուժերի դուրս բերումը Եգիպտոսից:

1957թ. Յունվար-մարտին իսրայելական զորքերը լքում են Սինայան թերակղզին և Գազայի հատվածը, հունվարի 5-ին հրապարակվում է «Էյզենհաուերի դոկտրինը» որը ԱՄՆ կոնգրեսի կողմից հավանության է արժանանում հունվարի 7-ին:

1960թ. Յիննադրվում է ՆԱԵԿ-ը, կենտրոնակայանը՝ Վիեննա:

1961թ. Յիննադրվում է ՏՀԶԿ-ն, կենտրոնակայանը՝ Փարիզ:

1963թ. Սկսվում է սեփական բնական գազի պաշարների արդյունաբերումը Նիդերլանդներում (Գրոնինգեն):

1964թ. Սկսվում է Յյուսիսային ծովում նավթագազային հետախուզումների արտոնագրերի տրամադրումը ՄԲ կառավարության կողմից:

1965թ. Սեպտեմբերի 21-ին «Բրիթիշ փեթրոլիում» ընկերությունը Յյուսիսային ծովում հայտնաբերում է նավթի առաջին պաշարները:

1967թ. Արաբա-իսրայելական 3-րդ պատերազմ

Ապրիլի 8-ին Յույն-թուրքական ընդհարումներ Կիպրոսում (Լիմասոլում), ապրիլի 21-ին ռազմական հեղաշրջում Յունաստանում: Մայիսի 7-ին սկսվում են Յյուսիսային ծովից ՄԲ գազի առաջին մատակարարումները: Մայիսի 20-ին Արաբական երկրների լիգան (ԱԵԼ) հայտարարում է, որ արաբական որևէ երկրի նկատմամբ հարձակումը կդիտարկվի իբրև բոլոր արաբական տերությունների նկատմամբ ագրեսիա: Մայիսի 22-ին Եգիպտոսը (այդ ժամանակ՝ Արաբական Միացյալ Յանրապետություն) փակում է Ակաբա նեղուցը իսրայելական նավերի համար, նույն օրը Եգիպտոսում և Իսրայելում հայտարարվում է ռազմակոչ: Մայիսի 23-ին ԱՄՆ-ը հորդորում է Եգիպտոսին՝ հարգել չեզոք ջրերում ազատ նավարկության իրավունքը: Նույն օրը ԽՍՀՄ-ը զգուշացնում է Իսրայելին՝ արաբական երկրների նկատմամբ ագրեսիայի անթույլատրելիության մասին: Յունիսի 5-ին սկսվում է Արաբա-իսրայելական 3-րդ՝ 6-օրյա պատերազմը, որի ընթացքում Իսրայելը գրավում է Սինայան թերակղզին, Գազայի հատվածը, Երուսաղեմի հին քաղաքը և արաբական այլ տարածքներ: Եգիպտոսի նախագահը մեղադրում է ԱՄՆ-ին և ՄԲ-ին՝ Իսրայելին պատերազմում աջակցելու մեջ: Արաբական երկրները ԱՄՆ և ՄԲ հուն

նավթի մատակարարումների էմբարգո են հայտարարում. այն հանվում է միայն 1967թ. սեպտեմբերի 1-ին: Հունիսի 9-ին կայանում է 7 սոցիալիստական երկրների ներկայացուցիչների խորհրդակցությունը Մոսկվայում [18]: Հունիսի 21-ին Եգիպտոս է այցելում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ն. Պողոզորնին՝ այս երկրի բանակի վերազինման խնդրի առնչությամբ: Հունիսի 23-25-ը ԱՄՆ նախագահ Ջոնսոնի և ԽՍՀՄ վարչապետ Ա. Կոսիգինի միջև բանակցություններ ԱՄՆ-ում: Հունիսի 17-ին հայտարարվում է Չինաստանում ջրածնային ռուսերի առաջին հաջող փորձարկման մասին:

1968թ. Փետրվարի 21-ին Արաբական էմիրությունները հայտարարում են 1971թ.-ին անգլիական զորքերի դուրս բերումից հետո ֆեդերացիայի ստեղծման մտադրության մասին: Այսպես (ԱՄՆ) հայտնաբերվում են նավթի մեծ պաշարներ:

1970թ. Սեպտեմբերի 28-ին 52 տարեկան հասակում մահանում է Եգիպտոսի նախագահ Գ. Ա. Նասերը, որին փոխարինում է Ա. Սադատը: Հոկտեմբերի 19-ին «Բրիքիշ փեթրոլիում» ընկերությունը Հյուսիսային ծովում հայտնաբերում է նավթի առաջին մեծ պաշարները:

1971թ. Փետրվարի 14-ին Պարսից ծոցի երկրների ճնշման տակ նավթային անդրազգային ընկերությունները համաձայնվում են բարձրացնել հուն նավթի գինը: Օգոստոսի 3-ից 23-ը փակվում են բոլոր եվրոպական տարադրամային շուկաները: Օգոստոսի 14-ին Բահրեյնը հայտարարում է ՄԲ-ից իր անկախությունը: ԱՄՆ նախագահ Նիքսոնը կարգադրում է դադարեցնել դուլարի փոխարկումը ոսկու, սառեցնել գները 90 օրով և 10%-ով բարձրացնել ներկրումների հարկումները, հայտարարվում է «նոր տնտեսական կուրս»: Նոյեմբերի 30-ին բրիտանական զորքերի դուրս բերումից հետո Իրանը գրավում է Պարսից ծոցի թունբ կղզեխումբը, այդ կապակցությամբ Իրաքը մեղադրում է ՄԲ և Իրանին գաղտնի գործարքի մեջ: Դեկտեմբերի 1-ին Արաբական էմիրությունները միավորվում են նոր, միացյալ պետության մեջ:

1972թ. Մարտի 22-ին ՄԲ-ում հիմնադրվում է Արդյունաբերական զարգացման նախարարությունը: Նույն օրը տարադրամային պահուստների պահպանման համար հաստատվում է ֆունտ սթերլինգի «լողացող» փոխարժեք: Ապրիլի 9-ին ստորագրվում է «բարեկամության և համագործակցության պայմանագիրը» ԽՍՀՄ և Իրաքի միջև՝ 15 տարի տևողությամբ:

1973թ. Արաբա-իսրայելական 4-րդ պատերազմ

Մարտի 2-19-ը նորից փակվում են բոլոր եվրոպական տարադրամային շուկաները: Մարտի 16-ին 14 երկրների նախարարների Փարիզյան հանդիպման ընթացքում համաձայնեցվում է տարադրամների «լողացող փոխարժեքի» ընդունումը: Մարտի 29-ին ամերիկյան վերջին զորքերը դուրս են բերվում Վիետնամից: Ապրիլի 23-ին Հ. Քիսինջերը ներկայացնում է նոր «Ատլանտյան խարտիան»: Հոկտեմբերի 6-ին սկսվում է նոր արաբա-իսրայելական պատերազմը: Հոկտեմբերի 10-ից սկսվում են սպառազինության օդային փոխարկումները ԽՍՀՄ-ից արաբական տերություններ: Նույն օրը

Իրաքը միանում է Իսրայելի դեմ պատերազմին: Հոկտեմբերի 13-ին պատերազմին միանում են Ս. Արաբիան և Հորդանանը: Հոկտեմբերի 17-ին արաբական 11 երկրներ հայտարարում են նավթահանումների ամսական 5% կրճատումների մասին, այնքան ծամանակ, մինչև որ ԱՄՆ չփոխի իր քաղաքականությունը Միջին Արևելքում: Հոկտեմբերի 19-ին ԱՄՆ նախագահը Կոնգրեսից Իսրայելին ռազմական օգնության տրամադրման համար պահանջում է 2 մլրդ. դոլար: Հոկտեմբերի 21-ին Մոսկվայում Հ. Քիսինջերը և Լ. Բրեժնևը քննարկում են Մերձավոր Արևելքում ռազմական գործողությունների դադարեցման պայմանները: Հոկտեմբերի 22-ին Իսրայելը և Եգիպտոսը ընդունում են ՄԱԿ-ի առաջարկը կրակի դադարեցման մասին: Հոկտեմբերի 25-ին, ի պատասխան ԽՍՀՄ զորքերի Մերձավոր Արևելք ներխուժման սպառնալիքի, ԱՄՆ-ի ռազմական ուժերում հայտարարվում է պատրաստականության առավելագույն աստիճան: Նոյեմբերի 5-ից 9-ը Հ. Քիսինջերը իրականացնում է «խաղաղության առաքելության» երթն արաբական մայրաքաղաքներով: Նոյեմբերի 7-ին ԱՄՆ Կոնգրեսը հաղթահարում է նախագահի արգելանքը՝ գործադիր իշխանության պատերազմ հայտարարելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ օրենքի նկատմամբ: Նոյեմբերի 11-ին Իսրայելը և Եգիպտոսն ընդունում են ԱՄՆ առաջարկը՝ կրակի դադարեցման համաձայնագրի կատարման և ռազմագերիների փոխանակման գործընթացների վերահսկման համար դիտորդների հրավերի մասին: Նոյեմբերի 13-ին, Էներգետիկ ճգնաժամի հետևանքով, ՄԲ կառավարությունը հայտարարում է արտակարգ իրավիճակ երկրում: Նոյեմբերի 29-ին ընդունվում է բենզինի վաճառքի տալոնային համակարգ, սահմանափակվում է ավտոտեղափոխումների արագությունը մինչև 80 կմ/ժ, դեկտեմբերին սկսվում են փողոցային լուսավորման համատարած անջատումները, գրանցվում է 1935թ.-ից ի վեր ընկերությունների բաժնետոմսերի ինդեքսի ռեկորդային անկում, ՄԲ վարչապետի կարգադրությամբ, էլեկտրաէներգիայի խնայման նպատակով, ողջ արդյունաբերությունը դեկտեմբերի 31-ից անցնում է եռօրյա աշխատանքային շաբաթի: Դեկտեմբերի 23-ին Իրանի շահը հայտարարում է, որ 1974թ. հունվարի 1-ից Պարսից ծոցի երկրները բարձրացնում են հուն նավթի գինը 5.1-ից 11.65 \$ մեկ բարելի համար:

1974թ. Հունվարի 8-ին հիմնադրվում է ՄԲ Էներգետիկայի նախարարությունը: Հունվարի 18-ին Իսրայելի և Եգիպտոսի միջև կնքվում է համաձայնագիր Սուեզի ջրանցքի տարածքից զորքերի հեռացման մասին: Հունվարի 25-ին ՄԲ Իրանին առաջարկում է արդյունաբերական արտադրանք 110 մլն. ֆունտ սթրեյնից արժողությամբ՝ 5 մլն. տ. նավթի լրացուցիչ առաքումների դիմաց: Մարտի 4-ին Եվրոպայի տնտեսական միությունը համագործակցության առաջարկ է անում արաբական 20 երկրներին: ՄԱԿ-ը կոչ է անում ստեղծել «միջազգային նոր տնտեսական համակարգ», որի գերակայությունը կլինի 3-րդ աշխարհի երկրների զարգացումը: Մարտի 11-ին ՄԲ-ում հանվում է արտակարգ իրավիճակը: Մարտի 14-ին թուրք-իրաքյան սահմանագծում քուրդ ապստամբների և իրաքյան բանակի միջև ընթանում են ծանր մարտեր: Մայիսի 18-ին Հնդկաստանը հայտարարում է իր առաջին

միջուկային ռումբի հաջող փորձարկման մասին: Հունիսի 12-ից հուլիսի 3-ը ԱՄՆ նախագահ Նիքսոնը այցելում է Մերձավոր Արևելք և ԽՍՀՄ: Հունիսի 20-ին Թուրքիայի ռազմական ուժերը ներխուժում են Կիպրոս: Օգոստոսի 9-ին պաշտոնանկ է լինում ԱՄՆ նախագահ Նիքսոնը: Օգոստոսի 12-ին Թուրքիան վերջնագրով պահանջում է 24 ժամվա ընթացքում հայտարարել Կիպրոսում թուրքական ինքնավար շրջանների ստեղծման մասին: Օգոստոսի 14-ին Հունաստանը դուրս է գալիս Հյուսիսատլանտյան դաշինքից՝ որպես բողոք թուրքական ագրեսիայի նկատմամբ այս կազմակերպության պասիվ դիրքորոշման: Նույն օրը թուրքական բանակը, անցնելով հարձակման, իր հսկողության տակ է առնում Կիպրոսի տարածքի մոտ 40%-ը: Ղեկտեմբերի 2-ին Իսրայելը հայտարարում է միջուկային զենք արտադրելու իր ունակության մասին¹⁹:

Ղեկտեմբերի 10, 2003 թ.

ЭНЕРГЕТИКА И ГЕОПОЛИТИКА

Ара Марджанян

Резюме

В статье рассматриваются динамика, особенности и тенденции развития энергетики на региональном и глобальном уровнях. Использована методика позволяющая адекватно сравнивать удельные энерго-экономические характеристики разных регионов и стран. Представлены энерго-экономические “динамические портреты” разных регионов.

Специальное внимание уделяется анализу межрегиональных потоков энергоносителей а так же динамике “импортной зависимости” обсуждаемых стран и регионов. Оценивается роль и значение энергетического фактора, переплетенного с геополитикой 2-ой половины XX века.

Один из основных базовых фактов современности, энерго-экономическое неравенство отдельных стран и целых регионов, заставляет “сырьевые” страны и регионы настойчиво искать “асимметричный” ответ современным вызовам. Эта тенденция,

¹⁹ Համաձայն [18]-ի, Իսրայելն ունակ էր միջուկային զենք արտադրել դեռ ավելի վաղ: Այսպես, «Իսրայելը 1973թ. պատերազմի ընթացքում պատրաստ էր միջուկային զենք կիրառել: 78 ժամվա ընթացքում, ստորգետնյա հատուկ թունելում հավաքվեցին 13 միջուկային ռումբ: Եվ միայն մարտական գործողություններում Իսրայելական բանակի հաջողությունը զսպեց նրանց օգտագործման վճռականությունը: Պատերազմից հետո այս ռումբերը անապատում գտնվող զինանոց տեղափոխվեցին: Այսպիսով, 1973թ. հոկտեմբերյան պատերազմի ընթացքում Մերձավոր Արևելքը գտնվում էր միջուկային կործանարար պատերազմի շեմին» [26]: Համաձայն «Տե.Վե.Ցե.» հեռուստաընկերության 22/09/03-ի հաղորդման, ներկայումս Իսրայելն ունի 200 միջուկային լիցք: ԱԷՄԳ ս. թ. սեպտեմբերյան նստաշրջանում կասեցվեց արաբ փորձագետների՝ Իսրայելի ռազմամիջուկային ծրագրի քննման առաջարկը:

усиливаясь наследием периода Холодной войны и питаясь логикой борьбы за региональную гегемонию, приводит к наиболее характерным и опасным проявлениям современной геополитики - взаимосвязанным явлениям ядерного, энергетического и террористического шантажа.

Вычленены основные этапы становления и развития политики энергетического шантажа, начиная с “этапа осознания” периода Суэцкого кризиса и 2-ой арабо-израильской войны. Обогащения арсеналов этой политики рассматривается на примерах простого и скоординированного нефтяных эмбарго периодов 3-ей и 4-ой арабо-израильских войн. Перечислены основные черты нынешнего “глобального” этапа политики энергетического шантажа. Подчеркнута роль Саудовской Аравии в обсуждаемом круге вопросов. В кратце описана реакция развитых стран, преодолевших энергетический кризис 70-ых и проводших глубокую реконструкцию своих энергетических секторов в рамках долгосрочной стратегии диверсификации, энергосбережения, повышения гибкости и живучести. Приведена краткая хронология основных событий в обсуждаемом контексте.

Для Армении, преодолевший энергетический кризис начала 90-ых, разработка и реализация подобной стратегии, является жизненной необходимостью.